


ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌՋԵԻ



Ա. ԽԱՉԱՏՐԻԱՆ

ԿԵԴՐԻՍ ԵՍԵՅԱՆ

9(47.925/

Կ-42

9(47.925)
Q-42

956.62 1
Lh 33.1
1919or 1

19 AUG 2011
3 MAR 2011
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

Հայկական Հարցը Խաղաղութեան Ժողովին առջև

Բովանդակ Հայ Ազգութեան անունով, որուն ընտրովի ներկայացուցիչները, Հայաստանէն եւ աշխարհի չորս կողմերէն եկած եւ Փարիզի մէջ դեռ նոր դումարած են համաժողով մը, Հայ Ազգային Պատուիրակութիւնը պատիւունի Սաղազութեան Ժողովին ներկայացնելու ներկայ յիշատակագիրը, որ կը խտացնէ Հայ Ազգին պահանջները եւ ձգտումները:

Դարաւոր տառապանքներէ եւ ճնշումներէ ետք, մեր ազգը այսօր կը զբաղուի տիրեցրեալ բռնկումի մը վախճանին, բզկտուած եւ արիւնլուայ, բայց լուսավառ հաւատքով մը կենդանի եւ սողորուն աւելի քան ոեւէ ժամանակ, ազատագրուելու եւ իրականացնելու համար իր ազգային խտէլը, շնորհիւ Դաշնակից եւ Գործակից պետութիւններու յաղթանակին, որոնք իրենց զօրակին վրայ արձանագրած են Իրաւունքի, Արդարութեան եւ Ժողովուրդներու Ինքնորոշման սկզբունքները:

Հիմնուելով այս մեծ սկզբունքներու վրայ, Հայ Ազգային Պատուիրակութիւնը, իրրեւ թարգմանը միահամուռ կամքին ամբողջ ազգին, որուն մէկ մասը արդէն կազմած է Կովկասի մէջ Անկախ Հանրապետութիւն մը, հստակեց ամբողջական Հայաստանի Անկախութիւնը եւ զայն տեղեկագրեց Դաշնակից կառավարութիւններուն, 1918 նոյեմբեր 30-ին մատուցած նօթով մը:

Հայաստան շահած է իր անկախութիւնը պատերազմին իր կամաւոր եւ ինքնաբեր մասնակցութիւնը բերելով Կովկասի, Սուրիոյ եւ Ֆրանսայի ռազմաճակատներուն վրայ, ինչպէս նաեւ հարիւր հազարաւոր մարդիկ, կիներ եւ մանուկներ զոհելով՝ որոնք ինկան Դաշնակիցներու դատին հաւատարիմ մնալով, զատ մը, զոր սկիզբէն իսկ, Հայաստան նկատեց իրրեւ իր սեփական դատը: Ռազմադաշտերու, ջարդերու եւ տարագրութեան ճամբաներու վրայ իր տուած հսկայական կորուստներով Հայաստան մահուան վճարեց աւելի ծանր տուրք մը, քան ոեւէ պատերազմիկ ազգ: Դաշնակիցներու յաղթանակը զայն փրկեց իր բռնաւորներու լուծէն եւ միայն իր տառապանքները բաւական պիտի ըլլային արդարացնելու անկախութեան իր իրաւունքը, բայց ան տակաւին իրաւունք ունի արժեցնելու պատմական, ազգաբնակչական, դիւանագիտական եւ բարոյական ուրիշ տուեալներ, զորս ստորեւ կը ջանանք ցոյց տալ եւ որոնց կարեւորութիւնը ոչ նուազ է:

Եւրոպական պետութիւններու Թուրքիոյ նկատմամբ քաղաքականութիւնը

երկար ատեն վարուած է օսմանեան կայսրութեան ամբողջականութեան վար-
դապետութիւնով: Թուրքիոյ ամբողջականութիւնը եւ թուրքերու կողմէ ճըն-
չրւած քրիստոնեայ ժողովուրդներու հանդէպ իրենց ունեցած պարտաւորու-
թիւնները իրարու հետ հաշտեցնելու համար, եւրոպական մեծ պետութիւննե-
րը կը ջատագովէին «բարենորոգումներ»ը, որպէսզի անոնցմէ կարենային օգ-
տուիլ ոչ թուրք ժողովուրդները եւ վայելէին հաւասար վերաբերմունք, առանց
ցեղի եւ կրօնքի խարութեան:

Իրողութիւնները ցոյց տուին թէ ի՞նչքան գէշ հիմնաւորուած էր այս յոյ-
սը: Թուրքերը, Մեր թէ Երիտասարդ, բարենորոգումներու մէջ միմիայն տե-
սան Եւրոպայի խաբելու միջոց մը եւ գործնականին մէջ շարժեցան ըստ այնմ,
խաղալով ճարպիկօրէն պետութիւններու մրցակցութիւններուն հետ եւ խոյս
տալով անոնցմէ: Քրիստոնեայ ազգաբնակչութիւնները Դրան աչքին դառնա-
լով կասկածելիներ, աւելի շատ դժբախտ եղան քան եղած չէին օսմ. պետու-
թեան սկզբնական ժամանակներու մէջ:

Հայաստանի ամբողջական պատմութիւնը օսմ. տիրապետութեան տակ վեց
դարերէ ի վեր ուրիշ բան եղած չէ, եթէ ոչ երկար մարտիրոսագրութիւն մը
պարբերական ջարդերով: Այս հալածանքները մասնաւորաբար ծանրակշիռ
հանգամանք մը ստացան վերջին յիսուն տարիներու ընթացքին, այն օրէն ի
վեր երբ հայերը հուշակեցին եւ պահանջեցին իրենց վիճակին բարւոքումը:

Սան Սթէֆանօի (1877) եւ Պերլինի (1878) դաշնագրութիւնները, Կիպ-
րոսի համաժողովը, 1895-ին Դեսպաններու կողմէ Բ. Դրան ներկայացուած
բարենորոգումներու ծրագիրը, որոնք միջազգային աբաեր էին թուրք բէժիմի
զեղծումները եւ շարիքները դարմանելու նպատակին սահմանուած, հանդի-
սացած են անբաւարար, մինչ եւրոպական դիւանագիտութիւնը զոհացած է
միշտ կիսամիջոցներով: Ամէն անգամ որ Եւրոպա խօսած է բարեփոխումնե-
րու մասին, Թուրքիա պատասխանած է ջարդերով, եւ Եւրոպա լռած է:

1908-ին հայերը իրենց ամբողջ աջակցութիւնը ընծայեցին Երիտասարդ-
Թուրքերուն, բռնապետութեան տապալումին համար: Երիտասարդ-Թուրքե-
րը, ստանալու համար անոնց աջակցութիւնը, խոստացան «հաւասարութեան,
եղբայրութեան եւ ազատութեան» զարագլուխ մը: Հայերը հաւատք ընծայե-
ցին այս խոստումներուն: Ոչ իսկ տարի մը ետք, սակայն, տեղի ունեցան Ա-
տանայի ջարդերը, ուր մօտ քսան հազար հայեր կորսուեցան: Բայց Թուրքիոյ
ամբողջականութիւնը պահպանելու քաղաքականութիւնը այս անգամ ալ ար-
գելեց որ պետութիւնները միջամտէին:

1912-1913-ին էր, պալքանեան պատերազմէն վերջ, ճիշդ այն ատեն, երբ
Լօստօնի բռնաճարտար զումարուած էր Պալքաններու հարցը լուծելու համար,
որ Մեծ Պետութիւնները, ի պատասխան ամբողջ Հայ Ազգի պահանջներուն,
միջամտեցին Դրան մօտ, ստանալու համար Պերլինի դաշնագրութեան 61-րդ
յօդուածով ձեւաւորուած բարենորոգումներու գործադրութիւնը:

Պոլսոյ ղեկավանները պարտաւորութիւն ստացան ուսումնասիրելու ծրագիր



1385-2011

մը եւ պատրաստելու անոր վերջնական ձեւը: Բանակցութիւնները եղան երկար ու տքնաջան, մինչեւ որ յաղթեցին Դրան դիմադրութիւններուն: Վերջապէս վերջացան այդ բանակցութիւնները, Դրան ընդունիլ տալով ծրագիր մը, աղճատուած եւ փոքրացուած՝ Գերմանիոյ միջամտութեամբ, որ երբէք չէր դադրած իր անակցութիւնը ընծայելէ թուրք դիւանագիտութեան: Երիտասարդ-թուրքերը փութացին, անմիջապէս որ Գեղմանիա պատերազմ յառաջացուց, պատուել այդ համաձայնադիրը՝ որ ստորագրուած էր 1914 փետրուար 3-ին: Ասիակա չարդիւնց սակայն զանոնք՝ հայեզուն առաջարկելու անպատիւ դաշնագրութիւն մը. անոնք առաջարկեցին միանալ թաթարներուն հետ եւ ոտքի կանգնիլ ռուսերուն դէմ, եւ փոխարէն, Դուռը հայերուն պիտի տար ինքնօրինութիւն մը: Գերմանիա կ'երաշխաւորէր իր դաշնակցին այս առաջարկութիւնը: Պէ՞տք է ըսել որ հայերը պատասխանեցին սրտմտած՝ մերժողականով մը: Եւ Երիտասարդ-թուրքերու վրէժխնդրութիւնը, պաղարիւնութեամբ կանխամտածուած եւ նախապէս յայտարարուած, սոսկալի եղաւ:

Մենք չպիտի պատմենք այստեղ ոչ ջարդերու եւ ոչ ալ տեղահանութիւններու մասին, որոնք եղան ջարդերու ուրիշ մէկ շնական ձեւը: Ատոնց պատմութիւնը կարելի է գտնել, աղաղակող վկաներու հաւաստիացումներով, Կապոյտ Գիրքին մէջ, որ ներկայացուցաւ Փարլամէնթին Լօրտ Պրայսի կողմէ, Մօրկընթօի, էյնըլէթայնի եւ նոյնիսկ գերմանացիներու կողմէ գրուած գիրքերուն մէջ, ինչպէս տօքթ. Նիէրաթի, Հէրբի Շթուրմէրի, տօքթ. Լէփսիուսի (որուն գիրքը դեռ նոր հրատարակուած է Փարիզի մէջ) եւ այլն: Բայց կարեւոր է հոս հաստատել որ բովանդակ ազգի մը բնաջնջման դործը կազմակերպուած է մէթոտաւոր կերպով Կառավարութեան կողմէ, որուն հրահանգները փոխանցուած են հայկական նահանգներու պաշտօնատարներուն շրջաբերականներով եւ հեռագիրներով: Այս վաւերաթուղթերէն շատերը արդէն գտնուած եւ հրատարակուած են:

Ոչինչ թողուցաւ դիպուածին Կառավարութեան կողմէ, ո՛չ մարդասպանութիւնները, ո՛չ աւարառութիւնները, ո՛չ խոչտանգումները, ո՛չ կողոպուտները, ո՛չ բռնի խլամացումները, ո՛չ անօթութեամբ մահացումները:

Այսօրինակ փորձառութենէ մը ետք, Դատը լսուած է այլեւս. Դաշնակիցները արդէն իրենց պետական մարդերու ըրած հանդիսաւոր յայտարարութիւններով, յանձնառու եղած են Հայաստանը վերջնականապէս ազատագրել բռնապետութենէ մը՝ որուն նմանը պատմութեան մէջ չկայ: Ժողովուրդներու պատերազմը, որուն ԿԸ ՀԵՏԵԻԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ, ՊԱՐՏԱԻՈՐ Է ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲԵՐԷ ԻՐ ԿԱՏԱՐԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Այս անկախութեան համար, զայն վաստակելու համար հայերը թափեցին հեղեղանման արիւն, ոչ միայն ջարդուած եւ տեղահանուած մարտիրոսներու արիւնը, որոնք մահացան զարհուրելի չարչարանքներով, այլ նաեւ արիւնը այն կամաւորներու եւ զինուորներու՝ որոնք ինկան ռազմազաշտերու վրայ, դաշնակիցներու կողքին կուուելով իրենց հայրենիքի ազատագրութեան հա-

մար: Բոլոր ռազմաճակատներու վրայ հայերը կռուեցան ինքնարերարար եւ կամաւորապէս: Ֆրանսայի մէջ, օտար լէզէոնի շարքերուն մէջ, անոնք իրենց քաջութեան համար վառքով պահուեցան: Անոնք կռուեցան Սուրիա եւ Պաղեստին, Արեւելեան Լէզէոնի մէջ, ուր վազեցին Ազգային Պատուիրակութեան հրաւերով: Այս Արեւելեան Լէզէոնը, որուն մէջ հայերը ամենէն աւելի դերակշիռ էին, ինքնին միայնակ կազմած էր Ֆրանսական զօրաբաժնի աւելի քան կէսը: Անոնք զօր. Ալէնպիի վճռական յաղթանակին մէջ աչքառու բաժին ունեցան, եւ զօրավարը յարգալից արտայայտութիւններ քրաւ անոնց քաջութեան համար: Անոնք կռուեցան նաեւ Կովկասի մէջ, ուր ատանց հաշուելու բոլոր ռազմաճակատներու վրայ ռուսական բանակներու մէջ ծառայող 150,000 հայ զինուորները, հայկական բանակ մը կազմուած 50,000 զինուորներէ եւ հազարաւոր կամաւորներէ, կռուեցաւ անդուլ զօր. Նազարբէկեանի գերագոյն հրամանատարութեան տակ: Այս բանակով էր որ Ռուսաստանի փլուզումէն եւ Պրէսթ Լիթովսկի դաշնագրութենէն ետք, հայերը խարուած եւ լքուած վրացիներու կողմէ եւ դաւաճանուած թաթարներու կողմէ, որոնք միացած էին թուրքերուն, պաշտպանեցին ճակատը եւ եօթը ամիս ամբողջ, ուշացուցին թրքական յառաջխաղացքը: Այսպէսով անոնք Միջագետքի բրիտանական բանակին ընծայեցին յայտնի ծառայութիւն մը, ինչպէս յայտարարեց Լօրտ Բօպէրթ Մէսիլ՝ Լօրտ Պրայսին ուղղած իր մէկ պաշտօնական նամակին եւ Համայնքներու Տան մէջ հարցապահ-դումի մը իր տուած պատասխանին մէջ: Միւս կողմէն նաեւ մինչեւ զինագազարի կնքումը, թուրքերուն դէմ ցոյց տուած իրենց զիմազրութեամբ, անոնք դէպի կովկասեան ճակատը քաշեցին Պաղեստինի թրքական զինուորները եւ այսպէս անուղղակիօրէն օգնեցին Սուրիոյ դաշնակից բանակին յաղթանակին:

Հայերը ուրեմն ճշմարիտ պատերազմիկներ եղած են: Պատերազմի հետեւանքով իրենց ունեցած կորուստը՝ որ մէկ միլիոնը կ'անցնի, ազգի մը համար, որուն թիւը չորսուկէս միլիոն էր, համեմատարար խիստ ծանր է քան ոեւէ ուրիշ պատերազմիկ ազգի մը կորուստը:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայերը, որոնք դարերէ ի վեր ենթարկուած են օսմանեան տիրապետութեան, ցրուած են կայսրութեան բոլոր մասերուն մէջ: Անոնց մէկ մեծ մասը գաղթած են արտասահման, Ռուսաստան, Ամերիկա, բռնապետութենէ խուսափելու համար: Որոշ է որ այս գաղթականներու մեծագոյն մասը պիտի վերադառնան իրենց ազատագրուած հայրենիքը: Հետեւարար, այն վիճակագրութիւնները՝ որոնք հաշուի պիտի առնուին, պատերազմէն առաջ եւ մասնաւորաբար 1894-96-ի համիտական ջարդերէն առաջ եղածներն են, ջարդեր՝ որոնք ոչ միայն 300,000 զոհեր խլեցին, այլ նաեւ յառաջացուցին ազգաբնակչութեան մէկ կարեւոր մասին արտագաղթը: Անընդունելի է որ ոճիրները օգտագործուին իրենց հեղինակներուն կողմէ, եւ ատոնց արդիւնքով անոնք հաս-

նին իրենց զարշելի նպատակին։ — այն է ապահովել իսլամներու գերակայութիւնը եւ մեծամասնութիւնը։ Բոլոր հայերու, քէ ողջերու եւ քէ մեռածներու ձայնը պէտք է որ լսուի։ Եթէ հայերը հայկական նահանգներու մէջ բացարձակ մեծամասնութիւն չեն կազմեր միւս ցեղերու ամբողջութեան հետ համեմատած, գէթ մեծամասնութիւն են եթէ բաղադրենք այդ ժողովուրդներու իւրաքանչիւրին հետ առանձին, առանձին։ Պատերազմէն առաջ, հալածակ վերջին դարու վերջերը տեղի ունեցող արտագաղթին, հայերու թիւը հայկական կոչւած վեց նահանգներու, Տրապիզոնի նահանգին եւ Կիլիկիոյ մէջ աւելի գերակըջիւռ էր քան թուրքերու եւ քիւրտերու թիւը, առանձին առանձին հաշուած, եւ հաւասար էր թուրքերու եւ քիւրտերու թիւին, միասին հաշուած։ Կային 1,403,000 հայեր, 943,000 թուրքերու եւ 482,000 քիւրտերու զէմ։

Միւս կողմէ, միայն հայ ազգաբնակչութիւնը չէ որ կորուստի ենթակըւած է։ Արդէն պալքանեան պատերազմները ծանր կորուստներ պատճառեցին սուլթանի բանակներուն, որոնք կանչուած էին գէնքի տակ գրեթէ միայն Ասիայէն։ Ներկայ պատերազմը սպառեց զօրակոչի աղբիւրները, քաղաքային բնակչութիւնը անգթօրէն տառապեցաւ, ոչ միայն ոռոններու կողմէ գրաւուած վայրերու մէջ, այլ նաեւ ամբողջ Ասիոյ մէջ, ուր անոնք տասանորդուեցան համաճարակներով, որոնք խնամատարութեան եւ բժշկական հոգատարութեան պակասի պատճառով, զարհուրելի աւերներ գործեցին իսլամներու մէջ։

Միւս կողմէ քանակը չէ միակ ազգակը՝ որ պիտի ծառայէ որոշելու այն հողամասերը եւ սահմանադրութիւնները՝ որոնք պիտի յատկացուին մեր Պետութեան։ Պէտք է նաեւ հաշուի առնել ոչ միայն մեռելները, այլ նաեւ քաղաքակրթութեան աստիճանաչափը եւ այն իրողութիւնը՝ որ հայերը միակ տարրն են, որ կարող են ներկայիս կազմակերպել քաղաքակրթութեան եւ յստաջղիմելու ընդունակ պետութիւն մը։

Իսլամ եւ ոչ-հայ այն ժողովուրդները՝ որոնք պիտի ապրին հայկական պետութեան մէջ, պիտի վայելեն այն բոլոր ազատութիւնները՝ որոնք երաշխաւորուած կ'ըլլան Խաղաղութեան Վեհաժողովի կողմէ ընդունուած սկզբունքներով։

Այս ժողովուրդներէն ամենէն կարեւորը Քիւրտերն են։ Անոնք երկու մասի կը բաժնուին, նստակեացներ եւ թափառաչըջիկներ։ Ասոնցմէ մեծ մասը լեռնցիներ են, որոնք աւազակի հոչակ ունին, եւ որոնք միշտ եղած են թուրք կառավարութեան ձեռքին մէջ ջարդի գործիքներ։ Իրենց քաղաքական բարեջրըւմը անցած չէ համայնքային բէթիմի մը մակարդակէն անդին։ Քիւրտերու մէկ կարեւոր մասը հաստատուած է Քիւրտիստան կոչուած հողամասերուն մէջ, Տիւրպէքիբի եւ Վանի (Շիքքեարի) հարաւային մասին մէջ։ Այս հողամասերը կարելի է անջատել Հայկական Պետութենէն։ Միւս նստակեաց քիւրտերը պիտի ապրին Հայաստանի մէջ օրէնքներու պաշտպանութեան տակ։

Կարեւոր է միաժամանակ յիշել որ քիւրտերու մէկ ստուար մասին ծագումը հայկական է, եւ եթէ անգամ մը թրքական ազդեցութիւնը վերնայ,

դիւրին պիտի ըլլայ հայ եւ քիւրտ երկու ցեղերու միջեւ համերաշխութիւն հաստատել, քանի որ հայերը պիտի կոչուին օգնելու քիւրտերուն, որ այս վերջինները վայելին քաղաքակրթութեան բարիքները, երկու ժողովուրդներու փոխադարձ օգուտներուն համար :

Գալով թափառաչըջիկներուն, մասնաւոր օրէնքներ պիտի ճշդեն անոնց ամառները արօտատեղի դաղթելու պայմանները, պահպանելու համար երկրի ապահովութիւնը եւ արդիւիւլու համար աւերները եւ կամ ջարդերը :

* * *

Այն սկզբունքներու համաձայն, զորս հրապարակ դրինք, այն հայկական հողամասերը՝ որոնք պիտի կազմեն անկախ Պետութիւնը, հետեւեալներն են :

1. — Վանի, Պիթլիսի, Տիարպէքերի, Սարբերդի, Սվազի, էրզրումի եւ Տրապիզոնի եօթը վիլայէթները (համաձայն 1914 փետրվարի բարենորոգումներու ծրագրին), ասոնցմէ դուրս ձգելով Տիգրիսի հարաւային կողմը եւ Օրտու-Սվազ գծի արեւմտեան կողմը գտնուող հողամասերը :

2. — Կիլիկեան չորս սանճազները, այսինքն Մարաշ, Գօղան (Սիս), Ճէպէլ-Պէրէքէթ եւ Ատանա Իսքէնտէրունով միասին :

3. — Կուլիասի Հայկական Հանրապետութեան ամբողջ հողամասը, որ կը պարունակէ Երեւանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նախկին նահանգին հարաւային մասը, Եղիսարէթօպօլի (Գանձակ) կառավարութեան հարաւարեւմտեան մասը, Կարսի նահանգը (բացի Արտահանի հիւսիսային կողմի հողամասը) (տես քարտէսը) :

Ինչ կը վերաբերի սահմանադրուիւններուն, մենք պարտինք յիշել որ երբ Ապտիւլ Համիտ գծեց նահանգներու վարչական սահմանները, ան այնպէս կար դադրութիւն մը ըրաւ, որ իւրաքանչիւր նահանգի մէջ մտցուց ոչ-հայկական շրջաններ, իսլամներու մեծամասնութիւն ապահովելու նպատակով : Նոյն ծրագրով՝ ան հայաբնակ շրջաններուն մէջ հաստատեց Պալքաններէն եւ Ռուսաստանէն ներգաղթող չէրքէզ եւ կամ այլ իսլամ գաղութներ : Պէտք է ուրեմն սահմաններու ընդհանուր վերանկատութիւն մը կատարուի : Ուստի մենք կը պահանջենք որ խառն մասնաւոր Յանձնախումբերու պաշտօն տրուի այս ճշդումը կատարելու համար, մնաւադ տալով անոնց, որ որոշեն Հայկական Պետութեան բոլոր սահմանադրուիւնները, հաշուի առնելով աշխարհագրական, ազգագրական, պատմական, տնտեսական եւ ռազմադիտական պայմանները :

Յոյներու թիւը, Տրապիզոնի նահանգին մէջ, որ Նախկին Պոնտոսի Թագաւորութեան օրրանը եղած է, հայերու թիւէն դերակշիռ է, բայց Տրապիզոնի նաւահանգիստը Սեւ Մովու վրայ ամբողջ Բարձր Հայքի միակ կարեւոր դուռն է : Յունաստան այս նահանգին վրայ աչք չունի, քանի որ այս նահանգը շատ հեռու է այն գլխաւոր կեդրոններէն, որոնց Յունաստան կը ձգար տիրանալ ժողովուրդներու իրաւունքի սկզբունքով : Եւ Հելլէնական կառավարութեան հետ կատարեալ հասկացողութեամբ է որ մենք կը պահանջենք Տրա-

պիղծոնի նահանգին մէկ մասին կցումը Հայկական Պետութեան, Հելլէնական կառավարութեան՝ որ այս հարցին ձօնեցած է արգարամտութեան մեծ ոգիով մը, զոր հաճոյքով զնահատելու պատիւը ունինք այստեղ: Յունական ազգաբնակչութիւնը կրնայ վստահ ըլլալ որ հայկական վարչութիւնը պիտի ապահովէ իրեն կրօնքի եւ լեզուի ազատութիւն ու յարգանք՝ եղբայրութեան եւ անկողմնակալ արգարութեան բէժիմի մը տակ:

Միւս կողմէ մենք կը յայտարարենք որ Յունաստանին տրուելիք շրջաններու հայերը պիտի ընդունին վստահութեան եւ հաւատարմութեան միեւնոյն ոգիով այն դրութիւնը, որ պիտի ստեղծուի Հելլէնական Կառավարութեան կողմէ:

Գալով Կիլիկիոյ կամ Փոքր Հայքին, պէտք կա՞յ ըսելու որ ան էտպէս հայկական է եւ միշտ Հայաստանի մաս կազմած է: Ան եղած է գրեթէ չորս դար հայկական վերջին թագաւորութեան օրրանը, մինչեւ այն օրը, երբ պարտուած արարներու կողմէ, իր վերջին թագաւորը Լեւոն Ե., գերի բռնուելով սարուեցաւ Եզիպտոս, յետոյ ազատուելով եկաւ եւ իր վերջին օրերը ապրեցաւ Փարիզ: Ան թաղուեցաւ Սէն-Տընիի դամբարանին մէջ, ուր մինչեւ այսօր կանգուն է իր գերեզմանը:

Ձէյթունի շրջանը, որուն բնակիչները, ըմբոստ եւ հպարտ ցեղի գաւաղներ, միշտ կապուած մնացած են իրենց ազգային իրաւունքներուն, միշտ վայելած է կէս-անկախութիւն մը: Կ'արժէ յիշել այստեղ որ ամէն ժամանակ եւ այսօր ալ Սիսի Կաթողիկոսը, Կիլիկիոյ կրօնական բարձրագոյն պետը, իր հայրապետական աթոռը հաստատած է Կիլիկիոյ մայրաքաղաք Սիսի մէջ:

Կիլիկիոյ բնակչութիւնը կը կազմեն հայեր եւ թուրքեր: Արար տարրը շատ փոքր համեմատութիւն մը միայն կը ներկայացնէ: Պատերազմէն առաջ, Կիլիկիոյ մէջ կային ձիւղ 20,000 սուրիացիներ, մինչ հայերու թիւը կը հասնէր աւելի քան երկու հարիւր հազարի, հակառակ 1909-ի Ատանայի ջարդերու պատճառով տեղի ունեցած հսկայական արտագաղթին: Ասոնցմէ զատ, պատմութեան մէջ կարելի է գտնել բազմաթիւ ուրիշ փաստեր, որոնք կը հաստատեն Կիլիկիոյ մասին մեր անվիճելի իրաւունքները: Ձենք կրնար հասկնալ թէ ո՞ր սկզբունքի անունով Սուրիական Կօմիտէն կը յայտարարէ թէ Կիլիկիան Սուրիոյ մասն է եւ Սուրիոյ սահմանագլուխը կ'երկարէ հիւսիսէն մինչեւ Տաւրոս, ինչպէս ցոյց կուտայ այս յիշատակադրին կցուած քարտէսը, որ հրատարակուած է այդ Կօմիտէի կողմէ եւ ներկայացուած է Մարտէյի Սուրիական Համագումարին: Ո՛չ մէկ քարտէս, ըլլայ հին աշխարհի կամ արդի աշխարհի քարտէսը, Կիլիկիան չէ զետեղած Սուրիոյ մէջ, որուն հիւսիսային սահմանները, ըլլալով Ամանոս լեռները եւ ոչ թէ Տաւրոսեան լեռները, կ'անցնին Իսկէտէրունի ձօնէն:

Հայ ժողովուրդը, եթէ զրկուի Կիլիկիայէն, եթէ անջատուի Մէրսինի եւ Եւոմուրթալքի (Այաս) բնական նաւահանգիստներէն, պիտի դատապարտուած մնայ սահմանափակուելու իր լեռնային գաւառներուն մէջ, առանց յարաբերու

Թիւն ունենալու միջերկրականեան երկիրներու հետ, առանց շնչել կարենալու : Աւելի ճիշդ բացատրութեամբ՝ Հայաստան զրկուած պիտի ըլլայ իր թոքերէն : Անոր կեանքը եւ ապագան Միջերկրականի վրայ են :

Միւս կողմէն, Սուրիական Կոմիտէի տեսակէտը կարելի չէ հաշտեցնել այն համաձայնութեան հետ, որ կայացած է 1916ին Ֆրանսական Կառավարութեան եւ Հայ Ազգային Պատուիրակութեան միջեւ, երբ այս վերջինը ծանօթացաւ դաշնագրութեան այն հատուածին, որ կը վերաբերէր Հայաստանի եւ որ դրժ-ւեցաւ այն Խորհրդաժողովի մէջ, ուր Դաշնակից պետութիւնները համաձայ-նութիւն կայացուցած էին Ասիական Թուրքիոյ մասին : Երախտագիտութեամբ հաւանութիւն յայտնելով այն փափաքին՝ որով Դաշնակիցները պիտի ազա-տագրէին թրքական լուծէն Կիլիկիան եւ արեւմտեան երեք նահանգները, Հայ Ազգային Պատուիրակութիւնը շտապեց հայթայթել հայ կամաւորներ, իրենց հայրենիքին ազատագրութեան համար : Այս կամաւորներէն աւելի քան 5,000-ը Արեւելեան Լէզէոնին մէջ մտան, ուր Սուրիացիները միայն ունէին երեք-չորս հարիւր կռուողներ, եւ իրենց վճռական մասնակցութիւնը բերին Պաղեստինի յաղթանակին, որուն կը պարտի այսօր Սուրիա իր ազատագրութիւնը :

Այս իրողութիւնները մենք կը յիշենք միմիայն անոր համար, որ Խաղա-ղութեան Վեհաժողովը առիթը ունենայ իր որոշումները կայացնել խնդրին հետ ծանօթանալով եւ համաձայն ազգութիւններու սկզբունքին, զոր Խաղա-ղութեան ժողովը ըրած է իր բանակցութիւններու հիմքը :

Եւ եթէ տակաւին դոյութիւն ունենայ Հայերու եւ սուրիացիներու միջեւ սահմանադրութի մասին տարակարծութիւններ, մենք պատրաստ ենք յայտա-բարելու որ Սուրիացիներու հանդէպ մեր սնուցած համերաշխութեան եւ բա-րեկամութեան զգացումները, զօրեղացած դարերու հասարակաց տառապանք-ներով, երբէք չպիտի տկարանան եւ ոչ ոք ճեղմէ աւելի կը բաղձայ ազատ եւ զօրաւոր Սուրիական Պետութիւն մը, իրրեւ զբացի Հայկական Պետութեան :

Կը պահանջենք որ Հայաստան, այսպէս սահմանաւորուած, դրուի Դաշ-նակից եւ Գործակից պետութիւններու հաւաքական երաշխաւորութեան, կամ Ազգերու Լիկային երաշխաւորութեան տակ, որոնք պիտի ապահովեն իր հո-ղամասերու ամբողջականութիւնը եւ անձեռնմխելիութիւնը : Նաեւ անոնք պէտք է որ Պետութիւններէն մէկուն լիազօրութիւն տան, սկզբնական քանի մը տարիներու ընթացքին, որ Նորակազմ Պետութեան ընծայէ աջակցութիւն՝ երկիրը կազմակերպելու եւ զայն զարգացնելու համար ելեւմտապէս : Այս ա-ջակցութիւնը ոչ մէկ ձեւով պէտք չէ որ բրօքէթօրայի մը հանդամանքը ստա-նայ, նոյնիսկ ժամանակաւորապէս, եւ պէտք է զօրծաղրուի հայ ազգին օգ-տին համար, այն ձեւով, որ Հայկական Պետութեան վեհապետութեանը ոչ մէկ կերպով վնասէ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հայկական ազգային պահանջներու ծրագրին ամփոփումը հետեւեալն է :
Կը պահանջենք .

1.— Հայկական անկախ Պետութեան մը ճանաչումը, որ կազմուած ըլլայ եօթը նահանգներու, Կիլիկիոյ եւ Կովկասի Հայկական Հանրապետութեան հողամասերու միացումով :

(Սահմանադրութիւններու ճշգրտան յանձնախումբերու պաշտօն պէտք է տրուի տեղին վրայ գծելու Հայաստանի վերջնական սահմանները : Այս յանձնախումբերը կազմուած պէտք է ըլլան երաշխաւորող Պետութիւններու պատուիրակներով, որոնց պէտք է աջակցին հայկական կօմիսարներ : Այս յանձնախումբերը լրակատար իրաւունք պէտք է ունենան գերիշխանօրէն հարթելու սահմանակից երկիրներու հետ ծագելիք դժուարութիւնները այն ատեն, երբ քարտէսի ցուցմունքները տեղին վրայ կը գործնականացուին) :

2.— որ Հայկական Պետութիւնը, այս ձեւով կազմուած, դրուի Դաշնակից Պետութիւններու եւ Միացեալ Նահանգներու հաւաքական երաշխաւորութեան տակ, կամ Ազգերու Ընկերութեան, որուն Հայաստան կը պահանջէ մասնակցիլ :

3.— որ Սաղաղութեան Վեհաժողովի կողմէ մասնաւոր մանուադ մը (յանձնակատարութիւն) տրուի Պետութիւններէն մէկուն, որ աջակցի Հայաստանին, փոխանցման շրջանի մը համար միայն : Յանձնակատար (mandataire) Պետութեան ընտրութեան ատեն, պէտք է խորհրդակցիլ այժմ Փարիզի մէջ գումարուող Հայկական Համազումարին հետ, որ կը ներկայացնէ բովանդակ հայութիւնը : Յանձնակատարութեան (mandat) տեւողութիւնը պէտք է ըլլայ առաւուսին քսան տարի :

4.— որ Սաղաղութեան Ժողովի կողմէ տուգանք մը յատկացուի, դարձանելու համար Հայ Ազգին կրած ջարդերու, տեղահանութիւններու, կողոպուտներու եւ աւերումներու պատճառով եւ այլ ամէն տեսակ վնասները :

Հայաստան իր կողմէն, պատրաստ պիտի ըլլայ իր վրայ առնելու պատերազմէն առաջ օսմ. պետութեան ունեցած Հանրային Պարտքի իրեն ինկած բաժինը :

5.— որ աջակից Պետութիւնը մանուադի համար ունենայ զլիսաւորբար հետեւեալները .

ա) Պարտադրել որ թուրք, թաթար եւ կամ ուրիշ իշխանութիւններ՝ որոնք իրենց զբաւման տակ կը պահեն տակաւին այս հողամասերը, պարպեն զանոնք :

բ) Վարել ազգաբնակչութիւններու ընդհանուր զինաթափումի գործը :

դ) Արտաքսել եւ պատժել բոլոր անոնք՝ որոնք մասնակցած են ջարդերու, բռնութիւն գործ դրած են ժողովուրդներու վրայ, մասնակցած են կողոպուտներու եւ կամ անոնք՝ որոնք օգտուած են զոհերու կողոպուտներէն :

դ) Երկրէն դուրս վտարել օրէնքը խանգարող տարրերը եւ թափառաշրջիկ անաստ համայնքները (tribus) :

ե) Իրենց տեղերը ետ դրկել այն մուհաճիրները (խլամ դաղթականներ), որոնք հոն բերուած եւ բնակուած են Համլտական եւ Երիտասարդ-Թուրք ըէժիմներու տակ :

զ) Վերջապէս ամէն միջոց ձեռք առնել որ իրենց նախկին կրօնքին վերադառնան այն բոլոր կիները, մանկամարդ աղջիկները, մանուկները եւ բոլոր անոնք՝ որոնք բռնի իսլամացուած են եւ կամ պատանդ կը մնան հարէճներու մէջ, ամէն տեղ, թէ երկրին մէջ եւ թէ դուրսը :

Թուրքիա պէտք է յանձն առնէ վճարել իր զինուորական զբաւումներու փոխարժէքները, եւ վերահաստատել, պահանջատէր հայերու պահանջներու հաւասար տուգանքի մը հետ միասին այն բոլոր անշարժ ստացուածքները՝ որոնք կը գրանդէին Թուրքիոյ սեփական հողամասերուն մէջ, նոյնպէս եկեղեցիները, դպրոցները, վանքերը իրենց համապատասխան ինչքերով, կալուած թէ գոյք, որոնք բռնագրաւուած են Հայ կազմակերպչական համայնքներէն ռեւէ ձեւի տակ :

Գալով հայերու ազգային կամ մասնաւոր ստացուածքներուն, որոնք մնացած են Թուրքիոյ մէջ առանց ժառանգորդի, Պոլսոյ հայ կրօնական իշխանութիւններուն իրաւունք պէտք է տրուի զանոնք իր տրամադրութեան տակ առնելու, ծախելու եւ անոնց արգիւնքը յատկացնելու իրենց հօտի պէտքերուն :

Հայկական ծաղում ունեցող այն ամէն անհատները, որոնք բնակութիւն հաստատած են օտար երկիրներու մէջ եւ քաղաքացի դարձած անոնց, իրաւունք պէտք է վայելեն, հինգ տարի պայմանաժամի մը մէջ, կատարելու իրենց ընտրութիւնը նորակազմ ազգութեան նկատմամբ եւ դառնալու հայկական քաղաքացիներ, թէ իրենք եւ թէ իրենց անչափահաս որդիները, զբաւոր կերպով նախ եւ առջ այդ բանը տեղեկագրելով երկու երկիրներու պատկան իշխանութիւններուն :

Հայերը կատարելապէս կը վստահին Խաղաղութեան Ժողովի արգարամբտութեան ոգիին վրայ, եւ չեն կասկածիր որ ան չնուիրագործէ իրենց ազգային պահանջներու այս ծրագիրը : Պետութիւնները, որոնք այժմ կը ճանչնան հայերը եւ որոնց ազգային զգացումները, կենսունակութիւնը եւ ռազմիկի

առաքինութիւնները ուժեղորէն երեւան եկան այս պատերազմի ընթացքին ,
կրնան վստահիլ անոնց : Պետութիւնները պարտաւոր են հզօր կերպով հաշուի
առնել աշխատանքի սէրը եւ մարդկային դործունէութեան բոլոր տիրոյթնե-
րուն մէջ ցոյց տուած ընդունակութիւնները ցեղի մը՝ որ աչքատու կերպով
ստեղծագործող է եւ ընդունակ բարձրագոյն կուլտուրայի եւ յառաջդիմու-
թեան :

Պետութիւնները կրնան վստահ ըլլալ, որ այսօրինակ տարրերով՝ Հայաս-
տան շուտով պիտի ըլլայ բարգաւաճ եւ ծաղկեալ Պետութիւն մը, խաղաղու-
թեան, արդարութեան եւ ազատութեան բէթիմի մը տակ եւ շնորհիւ Ազգերու
Ընկերութեան հսկողութեան ու Յանձնակատար Պետութեան աջակցութեան ,
հանդիսանալով Արեւելքի մէջ խաղաղութեան եւ քաղաքակրթութեան ամենէն
կարեւոր ազդակներէն մէկը :

Հայկական հարցը միայն տեղական եւ ազգային հարց մը չէ, այլ ան կապ
ունի Եւրոպայի խաղաղութեան հետ, եւ անոր լուծումէն կախուած պիտի ըլ-
լայ Մերձաւոր Արեւելքի անդորրութիւնը, յառաջդիմութիւնն ու բարգաւա-
ճումը :

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Նախագահ՝ Հայկական Հանրապե-
տութեան Խաղաղութեան Ժողովի
Պատուիրակութեան

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Նախագահ՝ Հայ Ազգային
Պատուիրակութեան

Փարիզ, 12 Փետրուար, 1919

Լրացուցիչ Նօթեր

ԿԻԼԻԿԻԱՆ

Սուրբիական Կօմիտէները ատենէ մը ի վեր հրապարակ դըրած են պրօշիւրներ եւ քարտէսներ, որոնցմով կը ջանան Կիլիկիան կցել Սուրիոյ: Բայց իր պատմութեամբ, իր աշխարհագրական դիրքով, իր բնակչութեամբ եւ տնտեսական յարաբերութիւններով Կիլիկիա հայկական բարձրաւանդակին կապուած հողամաս մըն է եւ շատ որոշ կերպով անջատուած՝ թէ Անատօլուէն եւ թէ Սուրիայէն:

Հայկական ամբողջ հողամասերը կը կազմեն շատ բարձր ընդարձակ դաշտադետին մը, պաշտպանուած Փոքր Կովկասեան, Պոնտոսի Միջին Հայկական, Տորոսեան, Անդի-Տորոսեան լեռնաշղթաներով եւ անոնց լեռնագօտիներով: Ասոնցմէ ոմանց ծովէն բարձրութիւնը կը հասնի շատ մեծ համեմատութիւններու: Լեռներով ցցուած եւ խորունկ հովիտներով կտրուած՝ այս երկիրը կը նմանի խառնափնտր հանդոյցի մը, որը բաղկացնող հողագրական դանազան մասերը ըլլալով խիստ նման իրարու, կը ձեւացնեն միատարր եւ շատ լաւ բընորոշուած աշխարհագրական միութիւն մը: Հայկական ամբողջիւն մըն է ան, վիթխարի պուլվար մը, որ կ'երկարի Սեւ Մովու արեւելեան անեկէն մինչեւ Միջերկրական եւ որ պատմութեան մէջ խաղացած է կարեւոր դեր մը: Ան կը բաժնէ Անատօլուի բարձրաւանդակը Կուրի դաշտադետիներէն, Պարսկաստանի, Միջադետքի եւ Սուրիոյ անապատներէն:

Քիւրտիստանի լեռները եւ Ամանոսը՝ որոնք հայկական բարձրաւանդակի վերջին երկարաձգումներն են, եւ որոնք կ'երթան կը յանդին Միջերկրական Մով Րէս-Իիւլ-Սանգիրի գլուխով, կը կազմեն պատնէշ մը, որ կը բաժնէ Սուրիական դաշտադետինէն ոչ միայն Կիլիկիան, այլ նաեւ ամբողջ Անատօլուն, համաձայն հին ու նոր բոլոր աշխարհագիրներու: Նոյնպէս Անդի-Տորոսը եւ Պուլհարեան լեռները արեւմուտքէն կը կազմեն հայկական բարձրաւանդակի սահմանը եւ կուզան կը վերջանան Մերսին, Միջերկրականի վրայ: Անոնք կը բաժնեն Կիլիկիոյ չորս սանձադները Փոքր Ասիայէն: Իր ջրաբաշխական դիրքով ալ, Կիլիկիա որոշ կերպով կ'անջատուի իր երկու դրացիներէն եւ կը կցուի հայկական բարձրաւանդակին, որովհետեւ իր երեք գլխաւոր գետերը, Թասուս, Սիհուն եւ ձիհուն, կը բղիթին հայկական լեռներէն եւ կը թափին Իսկէնտէրունի Մոցը: Այս ծոցն ալ սեղմուած հայկական բարձրաւանդակի լեռներուն երկու բազուկներուն մէջ, կը կազմէ անոր դէպի ծովը բնական ելքը:

Կիլիկիոյ պատմութիւնը նոյնն է ամբողջ հայկական բարձրաւանդակի պատմութեան հետ: Ըլլալով բարձրաւանդակներու ստորոտը, ան հանդիսացած

է, անպայման, երթեւեկութեան կէտ, որուն համար ասիական բոլոր տիրապետողներ կուտած են իրարու հետ :

Հիթիթներու ժամանակ է որ Կիլիկիա առաջին անգամ անկախ եղած է : Դարեր ան եղաւ հզօր թագաւորութիւն մը, որուն ղէմ Եգիպտոսի Ռոմանէսները ի գուր կուեցան, մինչեւ այն օրը, ուր վերջապէս ան ընկճուեցաւ Նինուէի թագաւորներէն :

11-րդ դարու վերջերը, այս երկիրը միայն մէկ անգամ շահեցաւ իր անկախութիւնը, շնորհիւ իր հայ ժողովուրդին եւ իշխաններուն, որոնք Սէլճուքներու մղումին տակ, կ'ընկրկէին ղէպի արեւմուտք : Հայկական այս թագաւորութիւնը տեւեց մինչեւ 14րդ դար, իր սահմանները երբեմն կ'ընդարձակուէին եւ երբեմն կը փոքրանային այն անվերջ պայքարներու ընթացքին, զորս պարտաւորուեցաւ մղել Բիւզանդական Կայսրութեան եւ իսլամ սուլթաններու ղէմ : Այս պայքարներու ընթացքին՝ ան դրեթէ միշտ աջակցութիւն դտաւ Սաչա-կիրներէն եւ լատին իշխանութիւններէն, որոնք հիմնուած էին անոնց կողմէ Անտիօք, Ուրֆա, Կիարոս եւ այլ տեղեր. ան միշտ կապուած մնաց Արեւմուտքի ժողովուրդներուն, իր կրօնքով եւ առեւտրով, իր պալատական սովորութիւններով եւ մանաւանդ իր արքայական տան ընտանեկան կապերով : Ան վերջ ի վերջոյ ընկճուեցաւ Թրքօ-իսլամ արշաւանքներու հեղեղին տակ :

Մենք կանգ չպիտի առնենք այն իրողութեան վրայ, որ «Սուրիա» քեր-միքը երբէք քաղաքական արտայայտութիւն մը եղած չէ եւ Սուրիական թագաւորութիւն մը երբէք զոյութիւն ունեցած չէ : Սելեւկիաններու թագաւորութիւնը, հիմնուած Մեծն Ալեքսանտրի զօրապարներէն մէկուն, Սելեւկիոսի կողմէ, յունական էր եւ ոչ մէկ կերպով ունեցած չէր սուրիական ազգային դրոշմ :

Այսօր կ'սկսի Կիլիկիոյ պատմութեան մէջ նոր շրջան մը, այն առաւելութեամբ որ՝ այն ժողովուրդը, որ պիտի հիմնէ հոն նոր հայրենիք մը հին աւերակներուն վրայ, նորեկ մը չէ, այլ այն նոյն ժողովուրդն է, որ հոն ապրած է դարեր շարունակ, հոն պայքարած է, հոն տառապած է եւ կը պահանջէ իր նախնիքներու հողին տիրանալու իրաւունքը : Անոր պահանջը այսօրուրնէ չսկսիր, այլ այն օրէն, երբ ան պարտուեցաւ եւ օտար լուծի ենթարկուեցաւ :

Չմոռնանք որ Կիլիկիան, ինչպէս նաեւ առհասարակ ամբողջ հայկական բարձրաւանդակը, երբէք ամբողջապէս ենթարկուած չեն թրքական տիրապետութեան : Մինչեւ 19-րդ դարու կէսը, փոքրիկ հայկական համախմբումներ իսկական տէրը եղած են իրենց լեռներուն, յաւիտենական կռիւ մղելով օսմանեան տիրապետութեան ղէմ :

Այսպէս, Ձէյթունի շրջանի վերջին յիսուն տարուան պատմութիւնը եղած է միայն բմբոստութիւններու երկար շարք մը, բռնաւորներու լուծին ղէմ : Ձէյթունցիները 1860-ին կուտած են Սուրշիտ փաշայի 12,000 զինուորներուն ղէմ, 1862-ին՝ Ազիզ Փաշայի 35,000-նոց կանոնաւոր եւ անկանոն բանակին ղէմ, 1896-ին, Էտհէմ Փաշայի 40,000-նոց բանակին ղէմ : Եւ հակառակ այս

բորբին, մինչև մեծ պատերազմի սկզբնաւորութիւնը, Ձէյթուն երբէք ամբողջապէս չէ նուաճուած : Ան միշտ մարմնացուցած է Հայաստանի կենդանի բողոքը թրքական լուծին դէմ, ճիշդ այնպէս, ինչպէս սասունցիները, նոյն Տարոսեան լեռներու մէկ ուրիշ մասին մէջ :

Չմոռնանք որ Կիլիկիոյ, ինչպէս նաև ամբողջ Հայաստանի մէջ, թուրք կառավարութեան կողմէ պարբերաբար կազմակերպուած ջարդերը մէկ նպատակ միայն ունեցած են .— Արեան մէջ խեղդել հայերու բողոքը եւ բնաջնջել բովանդակ հայ ազգը, որ դիտակից իր իրաւունքին եւ իր արժանիքին, յամաւորէն կը ձգտէր անկախութեան :

Կիլիկիոյ մէջ, կայ նաև մեր դարաւոր իրաւունքներուն մէկ ուրիշ պահապանը, Կիլիկիոյ Կաթողիկոսը, որ դարերու արիւնալի դէպքերու ընթացքին եւ այսօր ալ իր հայրապետական աթոռը հաստատած է Սիսի աւերուած արքայական պալատին մէջ եւ կ'սպասէ Հայկական Կառավարութեան դալուստին, ա՛նոր յանձնելու համար զանոնք եւ մարտիրոս ազգաբնակիւթեան վերապրողները, որոնց թիւը երբեմն մինչև կէս միլիոնի կը հասնէր :

Կիլիկեան չորս սանձազներու մէջ, զանազան տարբերու համեմատական թիւը պատերազմէն առաջ այն էր, ինչ որ էր հայկ. բարձրաւանդակինը : Երկրին գլխաւոր բնակչութիւնը կը բաղկանայ երեք տարբերէ, հայեր՝ որոնց թիւը 200,000-ը կ'անցնէր, 78,000 թուրքեր եւ ծոտաւորապէս 60,000 թափառական քիւրտեր եւ թիւրքմէններ : Միւս բնակչութիւնները երկրորդական թիւ մը կը կազմեն, կէս միլիոն ամբողջութեան մը քով՝ 15,000 արարներ եւ շուրջ 20,000 քրիստոնեայ սուրիացիներ : Հայաստանի բնակչութիւնը (հայեր, թուրքեր, քիւրտեր) ամբողջապէս տարբեր է Փոքր Ասիոյ բնակչութենէն, որուն գլխաւոր տարրերն են թուրքերն ու յոյները, եւ հիւսիսային Սուրիոյ բնակչութենէն, ուր առաւելակիտ տարրերն են արարները, թուրքերը եւ քիւրտերը : Արարները եւ քրիստոնեայ սուրիացիները միասին՝ քրտական լեռներէն եւ Ամանոսէն դէպի հիւսիս, ինչպէս նաև չորս սանձազներու եւ անմիջական սահմանակից զազաններու մէջ հոսիւ կը կազմեն ազգաբնակչութեան հարիւրին 7 տոկոսը, մինչ այս լեռներէն մէկ-երկու քիլօմէթր դէպի հարաւ՝ արար տարրը կը կազմէ ազգաբնակչութեան աւելի քան կէսը : Ասիկա կը նշանակէ որ Ամանոսը եւ քրտական լեռները կը ձեւացնեն բնական պատնէշ մը, ուր կը վերջանայ որոշ կերպով Սուրիան եւ կ'սկսի Հայաստանը :

Պատմական, աշխարհագրական եւ վիճակագրական այս կապերէն զատ, կան ուրիշ պայմաններ ալ, ասոնցմէ առաջ եկած, որոնք կիլիկեան չորս սանձազները ուժեղօրէն կը կապեն Հայաստանի միւս մասերուն : Այդ պայմանները նախ եւ առաջ զգացական նկատողութիւններու վրայ հիմնուած են : Մեր վերջին թագաւորներու օրրան, մեր վանքերու եւ ամբուլթիւններու աւերակներով ծածկուած հող, մեր անկախութեան եւ մեր դիմադրութեան ներքնամրոց Կիլիկիան մինչև այսօր կը հանդիսանայ հայերու գուրգուրանքին եւ մեծարանքին առարկան : Ոչ մէկ բան կրնայ խղել այսօրինակ կապերը, ժողովուրդ-

ները երբեմն կ'ենթարկուին նման խզումներու, բայց երբէք այդ կապերէն չեն հրաժարիր:

Այս զգացական տեսակէտին վրայ պէտք է աւելցնել նաեւ տնտեսական այն անողորմ անհրաժեշտութիւնը՝ որ կ'ստիպէ ամէն գնով Միջերկարանի ծովեզերեայ այս շրջանը միացնել իր հայկական hinterland-ին (ծովեզերեայ շրջանի մը յաջորդող անմիջական հողամաս): Հայկական ցամաքային ընդարձակ բարձրաւանդակը ծովուն վրայ ելք մը ունենալու պէտքը ունի, իր ճարտարարւեստական եւ վաճառականական յառաջդիմութեան համար: Հայաստանը բաժնել այս ծոցէն, կը նշանակէ կարել անոր տնտեսական երակները եւ մեռցնել անոր արտադրողական ուժը:

Կայ նաեւ ոչ նուազ կարեւոր բարոյական ազդակը: Հայերը աշխատասէր, գործունեայ եւ արտադրող են, բայց խրուած են զիրենք շրջապատող ճակատադրական ընդարմացումին մէջ: Հայութիւնը արիական, քրիստոնեայ ժողովուրդ մըն է, բայց ընկղմած է թրքո-խալաժական ծովու մը մէջ: Իր ոգիով հայր արեւմտեան է, բայց կ'ապրի թուրքերու եւ թաթարներու հետ շարունակական շփման մէջ, ինչ որ կը նշանակէ ապրիլ ամենայնտայնաց Արեւելքի մէջ: Այստեղ է ահա՛ թերեւս հայ ժողովուրդի կացութեան ամենաողբերգական կողմը, եւ պէտք է ըմբռնել որ Հայաստան իր հողեկան բովանդակ ուժով կը բաղձայ սերտորէն կապուիլ արեւմտեան աշխարհին հետ, եւ Արեւմուտքին հետ ունենալ անմիջական ու արագ շփում մը: Ասկէ է որ կը բղխի ահա՛ իր անպարտելի մղումը դէպի Միջերկարականի կապոյտը, որ կրնայ միայն զինքը փրկել իր ասիական բանտարկութենէն: Այս բաց դուռը մերժել իրեն՝ կը նշանակէ զինքը վերստին մղել թրքո-խալաժական աշխարհին մէջ, որուն սովորութիւններուն ան այլեւս չուզեր ենթարկուիլ եւ որոնց դէմ ան պարտաւորուած պիտի ըլլայ կուռիլ, մինչեւ որ Միջերկրականի այս դուռը բացուի իր առջեւ:

Այսուհանդերձ, հայերը չեն պահանջեր Կիլիկիոյ մէջ Ատանայի ամբողջ նահանգը: Մէրսինի արեւմտեան կողմը Իջիլի շրջանը՝ ուր հայկական տարրը ցանցառ է, կարելի է Հայաստանէն անջատել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԳՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ 19-րդ դարու կէսը, հայ ազգարնակչութիւնը Տաճկահայաստանի մէջ կը կազմէր բացարձակ մեծամասնութիւն: Վերջին յիսուն տարիներու ընթացքին, համիտական եւ երիտասարդ-թուրք բէթիմներու օրով, յիսնականներով հայկական դիւղեր անհետացած են, որոնց նկարագրականները ունինք մենք մեր 40-50 տարուայ գրականութեան մէջ: Թուրք կառավարութիւնը անոնց տեղ բերած զետեղած է Պալքաններէն եւ Կովկասէն զաղթող չէրքէզներ, թուրքեր եւ քիւրտեր: Նաեւ կեանքի անապահովութիւնը, թշուառութիւնը, արդարութեան բացարձակ բացակայութիւնը, բռնակալութիւնը եւ հալածանքը ստիպած են հայերէն մեծ մաս մը զաղթել դէպի Ռուսաստան, ազատագրուած Պալքանեան երկիրներ եւ Ամերիկա:

Բայց հակառակ թուրքերու բոլոր ջանքերուն եւ զործ դրած միջոցներուն, հայ ժողովուրդի գլխաւոր մասը կապուած մնացած է իր հայրենի հողին, կատարի ճգողականութեամբ մը: Ան միշտ եւ մինչեւ այս պատերազմի սկզբնաւորութիւնը, կազմած է Հայաստանի բնակչութեան ամենակարեւոր մասը, ոչ միայն իր մտաւորական գերակայութեամբ եւ տնտեսական զործունէութեամբ, այլ նաեւ բնակչութեան միւս տարրերուն հետ իր ունեցած համեմատական մեծամասնութեամբ:

Ինչ էր ջարդերէն առաջ Հայաստանի բնակչութեան թիւը եւ ինչ էր զանազան տարրերու թիւերուն իրարու հետ ունեցած համեմատութիւնը: Այսօրինակ հարցի մը մէջ, երբէք կարելի չէ վստահիլ թրքական տուեալներուն: Միւս կողմէն երբէք թուրքիոյ մէջ զոյութիւն ունեցած չէ կանոնաւոր մարդահամար եւ ստոյգ վիճակագրութիւն, թուրք կառավարութիւնը միւս եւ դիտումնաւոր կերպով խեղաթիւրած է վիճակագրութիւնները, այն նպատակով որ ցոյց տայ քէ հայերը անուան փոքրամասնութիւն մը կը կազմեն:

Տանք այս խեղաթիւրումներէն քանի մը օրինակներ:

Թուրք կառավարութիւնը 80,000 կը ներկայացնէ Վանի նահանգին հայերուն թիւը, մինչ ստոյգ կերպով հաստատուած է որ այս նահանգին հայերուն թիւը, որոնք վերջին դէպքերու պատճառով Ռուսաստան ապաստանեցան, աւելի քան 220,000 է:

Հայաստանի միւս ծայրը, Մարաշի սանճագին մէջ, թուրք կառավարութիւնը կը հաշուէ մօտաւորապէս 4,200 հայ, մինչ միայն Մարաշ քաղաքին մէջ, ըստ էլիզէ Ռէկլիւի, կային 20,000 հայեր, զէթ քաղաքին բնակչութեան կէսը հայեր էին: Ձէյթուն, որ կը գտնուի Մարաշի սանճագին մէջ, իր ութը դիւզերով ունէր 27,460 հայ եւ 8,344 իսլամ, 1880-ին տեղին վրայ կատարուած վիճակագրութեան համաձայն:

Թուրք կառավարութիւնը Վանի, Պիթլիսի, Տիարպէքիբի, Խարբերդի, Էրզրումի, Տրապիզոնի, Սիվազի, Ատանայի եւ Հալէպի ինը նահանգներու հայերու ամբողջական թիւը կը ներկայացնէ 848,000: մինչ Ամերիկեան Հայերու եւ Սիւրիացիներու Նպաստամատոյց Ընկերութիւնը, իր 1916-ին հրատարակած հինգերորդ զեկուցագիրով, կը հաստատէ որ Հայաստանի մէջ գտնուող հայերու թիւը կը հասնի 600,000-850,000-ի, Չօր, Հալէպ եւ Դամասկոս տարազբւածներու թիւը՝ 486,000-ի, Անատօլի ներսերը տարազբւածներու թիւը՝ 300,000-ի, Կովկաս ապաստանողներու թիւը՝ 200,000-ի: Եթէ այս թիւին վերայ աւելցնենք Կովկասի փախստականներէն քօլէրայի զոհ դացողներու, բռնի իսլամացուածներու, թուրքերու մօտ մնացող կիներու եւ երախաներու թիւը, մենք կրնանք հաստատել որ թուրքերու կողմէ ներկայացուած թիւը իրական թիւին կէսէն իսկ պակաս է:

Թուրք կառավարութեան վիճակագրութիւն կազմելու սովորական սխառմը հետեւեալն է. առաջին՝ առանց բնակչութեան ընդհանուր գումարը մեծ փոփոխութեան ենթարկելու, կարելի եղածին չափ պակսեցնել քրիստոնեանե-



բու թիւը եւ տարբերութիւնը աւելցնել իսլամներու թիւին վրայ. երկրորդ՝ զգուշանալ թիւերը դասաւորելէ ըստ ազգութիւններու, այլ միանուագ դասաւորել ըստ կրօնքի: Այսպէս, անոնք անջատ անջատ հաշուելով լուսաւորչական, բողոքական եւ կաթոլիկ հայերը, կը փոքրացնեն հայերու թիւը, մինչ մէկ թիւի մէջ կը միացնեն բոլոր իսլամները, թուրքերը, թաթարները, թիւրքմէնները, քիւրտերու զանազան ցեղերը, չէրքէզները, զազաները, արարները, պարսիկները, թափառաչըջիկ դնչունները եւ ուրիշներ, հոգ չէ թէ անոնք ո՛րքան տարբեր են իրարմէ ցեղով, իրենց պատմութեամբ, իրենց տնտեսական ապրելակերպով, իրենց կուլտուրական մակարդակով, եւ վերջապէս իրենց քաղաքական ձգտումներով:

Այսօրինակ հիմունքներու վրայ է որ ահա՛ բոլոր ազգագրական քարտէսները հրատարակուած են եւ յաճախ եւրոպական կարծիքը առաջնորդած են սխալի:

* * *

Թրքական Կայսրութեան ազգագրական հարցերուն կարելի չէ մօտենալ եւ զանոնք ուսումնասիրել այն մէթոտով, ինչ մէթոտով որ կ'ուսումնասիրուին եւրոպական երկիրներու ազգագրական հարցերը: Ասիական Թուրքիոյ մէջ, քաղաքական ազգային միութիւններ ստեղծելու նպատակով ազգութիւններու սկզբունքը կիրարկելու ատեն, բացարձակապէս անտրամաբանական պիտի ըլլար հիմք ունենալ զանազան շրջաններու ազգագրական դրութիւնը: Թուրքիոյ մէջ գոյութիւն ունին միմիայն քաղաքական հարցեր, եւ ազգագրական այն երեւոյթը, զոր կրնայ ներկայացնել ռեւէ ատեն այս կայսրութեան ռեւէ մէկ մասը, ուրիշ բան չէ եթէ ոչ քաղաքական կացութեան մէկ արդիւնքը: Կարելի չէ ուրեմն հիմնուիլ այդ արդիւնքին վրայ, հարցը մէջտեղէն վերցնել ուզուած ատեն: Մինչև Պերլինի դաշնագրութեան կնքուիլը, Հայաստան հինգ դարերէ ի վեր ճնշուած ըլլալով հանդերձ, ունէր հոծ, կուռ եւ բացարձակ մեծամասնութիւն կազմող հայ ազգաբնակչութիւն մը: Պերլինի դաշնագրութիւնը կնքուելէն ի վեր, որուն նպատակն էր հայերուն երաշխաւորել կեանքի եւ ինչքի ապահովութիւն, Հայաստանի ազգագրական դրութիւնը արժատական փոփոխութեան ենթարկուած է, բնութեամբ եւ ջարդերով: Հայոց Պատրիարքարանի կողմէ կազմուած 1882-ի եւ 1912-ի վիճակագրութիւնները իրարու հետ բազդատելով, կը տեսնուի որ 1882ին Թուրքիոյ մէջ հայերուն թիւը կը հասնէր 2,600,000ի, որոնցմէ 1,680,000-ը կ'ապրէին վեց նահանգներու մէջ, մինչ 1912-ին այս թիւերը կը նուազին փոխնիփոխ մինչև 2,100,000 եւ 1,018,000: Ուրեմն կը տեսնուի որ Թուրքիոյ հայերուն ամբողջական թիւը 500,000-ով պակասած է: Իրականին մէջ, այս նուազումը վեց նահանգներու մէջ եղած է 662,000, ինչ որ կը նշանակէ թէ Հայաստանէն դուրս՝ Թուրքիոյ հայերու թիւը աւելցած է 162,000-ով: Ասիկա ազգակող իրողութիւն մըն է, որ կը փաստէ թէ ազգագրական հարցը, Թուրքիոյ մէջ, ուրիշ բան չէ եթէ ոչ քաղաքական հարցի աստիճանական աստիճա-

նահափին արտայայտութիւնը, իրողութիւն մը, որով կը պարզուի որ երեսուն տարուան մէջ (1882-1912) վեց նահանգներու հայերուն թիւը փոխանակ աւելնալու, նուազած է 662,000-ով, մինչ թուրքիոյ միւս մասերուն մէջ գտնուող հայերուն թիւը աւելցած է 162,000-ով, եւ այս՝ անոր համար որ թուրքիոյ միւս մասերուն մէջ բնակալուծիւնը եղած է նուազ վայրագ, քան վեց նահանգներուն մէջ: Վերագառնալով հայերու թիւին ընդհանուր նուազումին, կը կարծուի՞ արդեօք թէ նուազումը եղած է միայն 500,000-ով:— Անշուշտ ո՛չ, բեղմնաւոր ցեղ մը, ինչպէս է հայկականը, ծննդաբերութիւններով այս երեսուն տարուան մէջ աւելցած պէտք էր ըլլար առնուազն 500,000-ով: Ասկէ կը հետեւի ուրեմն, որ թուրքերու կողմէ բնաջնջուած հայերու թիւը, երեսուն տարուան ընթացքին, իրականին մէջ եղած է մէկ միլիոն, եթէ 100,000 հաշուենք բնութեամբ արտասահման գաղթողներու թիւը:

Այս պատերազմի ընթացքին, աւելի քան մէկ միլիոն հայեր կորսուեցան: Ուրեմն, Պերլինի դաւանագրութեմէն ի վեր, որով Պետութիւնները հանդիսաւորապէս յանձնառու կ'ըլլային հայերու ապահովութեան, աւելի քան երկու միլիոն հայեր կոտորուեցան քուրքերու կողմէ: Նոյն Պետութիւնները, հիմնուած բնութեան վրայ դրուած ազգագրութեան մը վրայ, չեն կրնար ժխտել այժմ՝ Հայաստանի զուտ հայկական հանգամանքը:

Միայն այս վերջին քառասուն տարիներու ընթացքին չէ որ թուրքիոյ ազգագրական դրութիւնը կամայականութեան խաղալիկ եղած է: Այս դրութիւնը կը տիրէ թրքական կայսրութեան հիմնարկութենէն ի վեր: Թուրքիոյ ազգագրական կացութիւնը, աշխարհակալութեան շրջանէն ի վեր, միշտ ցոլացուցած է այն հնադարեան քաղաքականութիւնը, որ կը կայանայ հպտակ ցեղերը բնաջնջելուն մէջ: Երբ թուրքերը իրենց կայսրութիւնը հիմնեցին, բուն Փոքր Ասիան կը պարունակէր հոծ յունական բնակչութիւն մը, այսօր ան կը պարունակէ հոծ թրքական բնակչութիւն մը, ունենալով միայն յոյն համախումբուններ ծովեզերեայ տեղերու մէջ: Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս փոփոխութիւնը: Պատմութիւնը ցոյց կուտայ որ, երբ բարբարոսներ արշաւած են քաղաքակրթութեամբ երկիր մը, անոնք տարրայուծուած են հպտակ բայց քաղաքակրթութեամբ գերակշիռ ժողովուրդին մէջ, օրինակ Քրանսացիները՝ Կոլուայի մէջ, լոմպարտացիները՝ Իտալիոյ մէջ, պուլկարները՝ Պուլկարիոյ մէջ: Միայն թուրքիա բացառութիւն կը կազմէ այս պատմական օրէնքին մէջ, եւ այս բացառութիւնը յառաջ կուգայ միմիայն ջարդել եւ յետոյ զոհերու բացառութեամբ քան թրքական բնակիչներ տեղաւորելու քաղաքականութենէն:

Արդարեւ թուրքիա միշտ այս գաղթականացումը, իրրեւ երկրորդ բանակ մը, ծառայեցուցած է այն նպատակին որ զինուորական նուաճումներ տեսականացուին ազգագրական նուաճումներով, եւ ասոնց վրայ աւելցուցած է ուրիշ միջոցներ ալ, ինչպէս եէնիէէրիներու եւ թլւրտ համիտիէ զօրքերու ստեղծումը, եւայլն:

Այս նկատողութիւնները կը փաստեն, որ Թուրքիոյ մէջ ազգութիւններու սկզբունքի կիրարկումին հիմ կը ծառայէ ազգագրական այն դրութիւնը, որ ինքնին այդ միեւնոյն սկզբունքին յայտնապէս բռնաբարուած ըլլալուն արդիւնքն է: Այս պատերազմը կոչում ունի հարցը դնել իր իսկական ձեւին մէջ: Թրքական Կայսրութեան ազգագրական կերպարանքը այսօր հիմնապէս տարբեր է չորս տարի առաջուանէն, բնակչութիւնները այսօր թափառականներու զանգուածի մը վերածուած են: Ազգագրական ի՞նչ տուեալներու վրայ ուրեմն պիտի կիրարկուի ազգութիւններու սկզբունքը:

Ստուգիւ, կայ միմիայն մէկ հիմունք, զոր կարելի է նկատողութեան առնել, եւ այդ՝ անոր բոլոր տարբերուն ունեցած պատմական իրաւունքն է: Ինչպէս որ պալքանեան ժողովուրդներ կրցան տիրանալ անկախութեան՝ իրենց ազատագրութեան առաջին վայրկեանին, եւ ինքզինքնին գտան ազգագրական տեսակէտէ միեւնոյն դժուարութիւններուն առջեւ, ինչպէս հայ ժողովուրդը, նոյնպէս ալ Հայաստան պէտք է որ վերագտնէ իր անկախութիւնը, իրականացնելով «Հայաստանը հայերուն» սկզբունքը, որ սրբագործուած է վեց դարերու մարտիրոսագրութեամբ: Հայաստանի ազգագրական դրութիւնը այնքան փափուկ չէ, որքան էր Պուլկարիայինը, 1876-ին: Այս բանը կ'երեւի յասակ կերպով, երբ բազմաանք երկու վիճակագրութիւններ, մին Պուլկարիոյ 1876-ի վիճակագրութիւնը, համաձայն Ռուսոյի հիւպատոս պ. Օպարէի իր կառավարութեան մատուցած եւ Bulletin de la Societe Geographique-ի (1876) մէջ հրատարակուած տեղեկագրութեան, եւ միւսը Հայաստանի վիճակագրութիւնը՝ համաձայն 1912-ին Հայոց Պատրիարքարանի կազմած մարզահամարին (տե՛ս այս յիշատակագրին կցուած թիւ 5 տախտակը): Պէ՞տք է դեռ յիշատակել որ Յունաստան, իր անկախութիւնը հռչակած առեւ, ունէր միայն 300-400,000 յոյն:

Բայց, այս հիմնական հաստատումներէն դուրս, Հայաստանի մէջ Թուրքերու կողմէ ստեղծուած կամայական ազգագրական դրութեան ուշադիր մէկ զննութիւնը ցոյց կուտայ որ Հայաստանի էական տարրը այսօր ալ դեռ հայ ժողովուրդն է, հակառակ դարաւոր կոտորածներու:

Եթէ մենք նկատի ունենանք Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի կազմած վիճակագրութիւնը, ինչպէս նաեւ հայկական ուրիշ վաւերաթուղթեր, մենք կրնանք հաստատել որ ամբողջ Թուրքիոյ մէջ հայերու թիւը, պատերազմի սկզբին, կը հասնէր երկու միլիոնէն քիչ մը աւելի, որոնցմէ 1,403,000-ը կ'ապրէին Հայաստանի մէջ (տե՛ս այս յիշատակագրին կցուած թիւ 2 տախտակը):

Պատերազմի սկզբին, ռուսական պաշտօնական վիճակագրութիւններու համաձայն, Կովկասի ամբողջ հարաւային մասին մէջ ապրող հայերու թիւը կը հասնէր 1,804,600-ի, որոնցմէ 1,296,000-ը կ'ապրէին բուն Հայաստանի մէջ (տե՛ս այս յիշատակագրին կցուած թիւ 3 տախտակը):

Եթէ այս թիւերուն վրայ աւելցնենք ուրիշ երկիրներու մէջ ապրող հայերու թիւը, որ է 823,000, մենք կ'ստանանք հայերու պատերազմէն առաջուան ընդհ. թիւը, որ է 4,470,000 (տես այս յիշատակագրին կցուած թիւ 4 տախտակը) :

Այս թիւէն մօտաւորապէս 2,700,000 կ'ապրէին մայր հայրենիքին մէջ, եւ աւելի քան 1,000,000 անմիջական շրջականները :

Հայաստանի մէջ բնակող թուրքերու թիւն էր 1,005,000,

Թաթարներունը՝ 537,000,

Թափառական թիւրքմէներուն եւ քիւրտերունը՝ 555,000,

Բոլոր իսլամները միասին կը կազմէին 2,308,000 :

Արդ,

1.— Առանձին առանձին հաշուած բնակչութեան ամբողջութեան հետ, հայերը Հայաստանի մէջ կը ներկայացնէին համեմատական մեծամասնութիւն :

2.— Թրքական Հայաստանը առանձին հաշուած, հայերու թիւը քիչ մը աւելի էր, քան բոլոր միւս իսլամ տարրերու թիւը՝ միասին հաշուած :

3.— Թուրքիոյ եւ Կովկասի հայկական հողամասերը միասին առած, հայերը ամբողջ իսլամ բնակչութեան ընդհանուր թիւէն զգալի կերպով գերակշիռ էին :

4.— Բոլոր քրիստոնեայ ժողովուրդներու թիւը կը կազմէր հարիւրին 55 տոկոս եւ զանազան կրօնքի պատկանողներու թիւը՝ հարիւրին 5 տոկոս :

Կորուստներու թիւը, զոր այս պատերազմը պատճառած է հայերուն, զարհուրելի է : Ուրիշ ժողովուրդներու կորուստները հազիւ հարիւրին 10 տոկոս կը կազմեն, իսկ մեր կորուստները կը կազմեն հայերու ամբողջ թիւին մէկ քառորդը, իսկ Հայաստանի մէջ բնակող հայերու թիւին գրեթէ կէսը :

«Այլեւս հայկական հարց գոյութիւն չունի, մենք արդէն լուծած ենք այս հարցը», կ'ըսէր շնականօրէն թուրք նախարարը :

Այս փաստարկութիւնը ընդունել պիտի նշանակէր ժխտել մարդկային ամէն արդարութիւն, անարգել միլիոնաւոր մարդկային էակները, որոնք զոհուած են Իրաւունքի յաղթանակին համար : Այդ պիտի նշանակէր նուիրագործել մարդասպաններու ոճիրները եւ վարձատրել ամբողջ ազգ մը բնաջնջելու թրքական դիւային ծրագիրը :

Միւս կողմէ սակայն, բարեբախտաբար ճշմարիտ չէ որ բոլոր հայերը բռնաջնջուած են : Թէեւ զոհերու թիւը կը հասնի մէկ միլիոնի, թէեւ վերապրողներէն մաս մը, որոնք փախտական են կամ տեղահանուած, զոհ դացած է սովի եւ համաճարակներու, եւ անոնք՝ որ կը մնան, ուժաթափուած են կոիւնքով եւ անվերջ տառապանքներով, բայց տակաւին ազգին մէկ մասը կ'ապրի եւ ան միայն մէկ յոյս ունի, մէկ կամք.— վերստին վառել իր մարած օճախը, վերաջինել քանդուած տունը, նորէն լծուիլ աշխատանքի եւ այս անգամ ինքն իրեն համար, անկախ եւ ազատագրուած հայրենիքին մէջ :

Երեք ու կէս միլիոնի թիւէն, զոր մենք կը ներկայացնենք այսօր, մէկ ու կէս միլիոնը կը գտնուին հայրենի հողին վրայ: Վաղը այս թիւը դիւրաւ կը հասնի երկուք ու կէս միլիոնի: Կովկաս, Ռուսաստան, Կ. Պոլիս, Եւրոպա, Եգիպտոս, Ամերիկա, Պալքանները, ամէն տեղ, անոնք կ'սպասեն անհամբեր մայր հայրենիք վերադառնալու ժամուան, եւ բոլորն ալ յոյսով սարսուռն՝ ատոր համար կը պատրաստուին:

* * *

Գալով իսլամներուն, անոնց թիւն ալ Հայաստանի մէջ նուազած է, շատ աւելի մեծ համեմատութեամբ, քան ընդհանրապէս կ'ենթադրուի:

Առաջին, այն նահանգները՝ որոնք ուսուսական բանակներու արշաւանքին եւ գրաւման թատր հանդիսացած են, ինչպէս Էրզրում, Տրապիզոն, Վան, Պիթիս, այսօր գրեթէ մեծ մասամբ իսկական անապատներ են. որովհետեւ իսլամ բնակչութեան մէկ մեծ մասը զոհ դացած է պատերազմին, կամ փախուստ տուած է եւ կամ զոհ դացած համաճարակներու: 1917 տարուան վերջը, Վանի, Պիթիսի եւ Էրզրումի նահանգներուն մէջ կային մօտաւորապէս 46,000 թուրքեր եւ 50,000 քրիստոնք:

Երկրորդ, մեր երկրին այն մասերուն մէջ, որոնք պատերազմի ճակատներուն անմիջականօրէն մօտ կը գտնուէին, ինչպէս Սվազի, Սարրերզի, Տիգրասնակերտի նահանգները, իսլամ բնակչութիւնը հակայական կորուստներու ենթարկուած է նահանջի, սովի եւ տիֆի ու քոլէրայի համաճարակներու պատճառով, համաձայն գերման սպաներու վկայութիւններուն: Օրինակ, Տիգրասնակերտ քաղաքը, որ պատերազմի սկզբին, ունէր 55,000 բնակիչ եւ որոնցմէ 1915-ի աշնան 22,000 հայեր տարագրուեցան եւ անոնց տեղ անմիջապէս Պիթիսի շրջանէն 30,000 իսլամ զաղթականներ բերուեցան եւ զետեղուեցան, 1917-ի մայիս ամսուան մէջ ընդամէնը ունէր միայն 6,000 բնակիչ:

Երրորդ, այս նահանգներու մէջ մնացող իսլամներու մեծ մասը, անմիջապէս որ իմանան թէ մեր անկախութիւնը իրականացած է, այլեւս չպիտի ուզեն մնալ, այլ պիտի քաշուին դէպի սահմանակից շրջանները, ապրելու համար թրքական կառավարութեան մը տակ, ինչպէս որ միշտ եղած է, ամէն անգամ որ քրիստոնեայ ազգութիւններ ազատագրուած են թրքական տիրապետութենէն:

Չորրորդ, հայկական եւ թրքական կառավարութիւններու միջեւ համաձայնութիւն կայացնելով, կարելի պիտի ըլլայ բնակչութիւններու կանոնաւոր փոխանակութիւն մը կատարել: Կարելի է նոյնպէս այս հարցը ենթարկել Ազգերու Լիկային եւ լուծել զայն արգար եղանակով մը, որովհետեւ այս հարցի լուծումէն բարերար հետեւանքներ յառաջ պիտի գան բոլորին համար ալ, թէ Հայաստանի, թէ Թուրքիոյ եւ թէ տիւրքական խաղաղութեան համար:

Եւ վերջապէս մէկ խօսքով, Հայաստանի սահմաններուն մէջ հազիւ կը մնայ պատերազմէն առաջ գոյութիւն ունեցող իսլամ բնակչութեան կէսը, այսինքն մէկ միլիոնէն իսկ պակաս, որ հաւանաբար բազկացած ըլլայ հետեւեալ

կերպով · կէս միլիոն թուրքեր, չէրքէզներ եւ նմանազգի տարրեր, 300,000 թա-
թարներ եւ 200,000 քիւրտեր : Այնպէս որ, իր ընդհանուր գիծերուն մէջ կա-
րելի կ'ըլլայ կազմել հետեւեալ տախտակը, որ զազապար մը կրնայ աւել թէ
ի՛նչպէս դասաւորուած պիտի ըլլան Հայաստանի բնակչութիւնները՝ իր գո-
յութեան առաջին տարիներուն :

Քրիստոնեաներ

Հայեր	2,500,000
Յոյներ, նեստորականներ, ռուսներ, վրացիներ, եւրոպացիներ	500,000
Իսլամներ	
Թուրքեր, չէրքէզներ, արարներ, պարսիկներ	500,000
Թաթարներ	300,000
Քիւրտեր	200,000
Ուրիշ կրօնքի պատկանողներ	
Քրդըրպաչներ, եէզիտիներ, զազաներ, Փէլլահներ	300,000
Ընդհանուր գումար	
Քրիստոնեաներ	3,000,000
Իսլամներ	1,000,000
Ուրիշ կրօնքի պատկանողներ	300,000

Մենք ըսինք նաեւ որ ժողովուրդի մը կարեւորութիւնը ոչ միայն իր քա-
նակով կը չափուի, այլ նաեւ մանաւանդ իր տնտեսական ընդունակութիւննե-
րով եւ քաղաքակրթական մակարդակով :

Ամենահին պատմարանները ցոյց տուած են հայերու արժէքը, որոնք իրենց
նախաձեռնութեան ոգիով, խիզախութեամբ, մեծ եւ ընդարձակ ձեռնարկներ
ընելու ընդունակութեամբ, ջանացած են ամենանախնական ժամանակներէ ի
վեր, զարգացնել վաճառականութիւնը եւ ճարտարարուեստը՝ ամբողջ յառա-
ջագոյն Ասիոյ մէջ, եւ ասով իսկ հանդիսացած են, յոյներու եւ փրենիկեցիներ-
րու հետ միասին, Արեւելքի քաղաքակրթութեան ռահվիրաները :

Այս գերը հայերը շարունակած են կատարել ամբողջ Միջին դարու տեւո-
ղութեան, ինչպէս նաեւ արդի ժամանակներու մէջ : Լաւագոյն է այստեղ յի-
շատակել գերման գիտողի մը, Փօլ Ռօրպախի վկայութիւնը, որ եղած է հա-
մադերմանականութեան առաքեալ մը եւ միայն ի նպաստ թուրքերու կողմնակ-
ցութեամբ կասկածելի կրնայ ըլլալ :

«Այսօրուան թուրքիոյ մէջ, եթէ միայն ան պարփակուի իր ասիական ըս-
տացուածքներուն մէջ, Հայերը ունին աւելի մեծ նշանակութիւն քան որ ա-
նոնց թիւը ցոյց կուտայ : Անոնք անկասկած կը կազմեն արեւելեան բոլոր ժո-
ղովուրդներու մէջ ամենէն գործունեայ տարրը, թէ մտաւորական եւ թէ նիւ-
թական տեսակէտներէ : Նոյն իսկ կարելի է ըսել որ, այդ միջավայրին մէջ, ա-
նոնք կը հանդիսանան միակ ժողովուրդը՝ որ ունի ազգային բնածին յատկու-
թիւններ : Հայը օժտուած է այնպիսի էմերժիով եւ այնպիսի տոկոսնութեամբ

մը, որ հակասութիւն կը կազմէ այն ամէնուն հետ, որ սովորութիւն եղած է արեւելեան նկարագրի անունով որակել» :

Թրքական Հայաստանի հայ տարրին անտեսական գործունէութեան վրայ դադար մը տալու համար, մենք կը ներկայացնենք Սվազի նահանգին վաճառականական եւ ճարտարարուեստական վիճակագրութիւնը, Սվազի նահանգին՝ որ վեց նահանգներէն նուազ հայկական նահանգ մըն է : Այդ վիճակագրութենէն պիտի տեսնուի որ առեւտրական եւ ճարտարարուեստական բովանդակ գործունէութիւնը գրեթէ բացառաբար հայերու ձեռք է :

Վաճառականութիւն. ներածում, կան 166 մեծ վաճառականներ, որոնցմէ 141 հայեր են, 13 թուրքեր եւ 12 յոյներ :

Արտածում. կան 150 մեծ վաճառականներ, որոնցմէ 127 հայեր են եւ 23 թուրքեր : Կան 37 սեղանաւորներ եւ դրամատէրեր, որոնցմէ 32 հայեր են եւ 5 միայն թուրքեր :

Կան 9,800 խանութպաններ եւ արհեստաւորներ, որոնցմէ 6,800 հայեր են, 2,555 միայն թուրքեր եւ 150 տարրեր ազգութիւններու պատկանողներ :

Ճարտարարուեստ. կան 153 գործարաններ, որոնցմէ 130 կը պատկանին հայերուն : Բոլոր գործարաններու տէխնիկական պաշտօնեաները բացառապէս հայեր են : Գործաւորներու թիւն է 17,700, որոնցմէ մօտաւորապէս 14,000 հայեր են :

Բաւական պիտի ըլլայ յիշել նաեւ այստեղ, որ պատերազմէն առաջ երկու միլիոն հայեր իրենց ձեռքերուն մէջ ունէին քսան միլիոն բնակչութիւն ունեցող օսմանեան կայսրութեան վաճառականութեան ամենամեծ մասը : Բայց առեւտուրը երբէք հայ ժողովուրդի գրազման գլխաւոր առարկան եղած չէ : Ազգին ամեմախոշոր մեծամասնութիւնը (հարիւրին 85-90) ամէն ժամանակ նուիրուած է երկրագործութեան եւ փոքր արհեստներու, թէ թուրքիոյ մէջ, թէ Կովկասի մէջ, թէ Պարսկաստանի մէջ : Հայերը ամէն բանէ առաջ մշակներ եւ արհեստաւորներ են :

«Վանի վիլայէթին մէջ, կ'ըսէ Ռօրպախ, հայերը իրենց ձեռքերուն մէջ ունին վաճառականութեան հարիւրին 98, երկրագործութեան հարիւրին 80 : Ոսկերիչները, փորագրիչները, կահկարասի շինողները, դերձակները, կօշկակարները, ճարտարապետները, կահագործները, որմնադիրները, դարբինները բոլորն ալ հայեր են : Անոնք որ ազատ արուեստներով կ'ըրազին, բժիշկներ, լիաստարաններ, դեղագործներ նոյնպէս հայեր են : Երեւոյթը նոյնն է նաև ուրիշ շրջաններու մէջ ալ :

«Հայ տարրին գործունէութիւնը յայտնապէս կը նշմարուի նաև ժողովրդական դաստիարակութեան եւ դպրոցական կազմակերպութեան կալուածներուն մէջ : Հայերուն դպրոցները աւելի բազմաթիւ եւ աւելի լաւ են քան թուրքիոյ միւս ազգերուն դպրոցները : Եւ ինչ որ մասնաւորաբար նշմարելի է, այն է որ այդ դպրոցները շինուած են միմիայն կամաւոր նուիրատուութիւններով, ոչ միայն հարուստ հայերու, այլ ժողովուրդի բազմաթիւ անհատներուն եւ

Հասարակ աղքատներուն կողմէ : 1903-ին, Թուրքիոյ մէջ կը հաշուուէին 818 Հայկական դպրոցներ, աւելի քան 82,000 աշակերտներով եւ աշակերտուհիներով : Այս դպրոցները կախում ունին Պոլսոյ Պատրիարքարանէն, այս թիւին վրայ պէտք է աւելցնել կաթողիկ եւ բողոքական հայերու, ինչպէս նաեւ անհատական սեփականութիւն եղող դպրոցները : Միայն Տաճկահայաստանի մէջ, այսինքն վեց նահանգներու եւ Կիլիկիոյ մէջ, վերը յիշուած թիւին մէջ հաշուած, կան 585 Հայկական դպրոցներ, 52,000 աշակերտներով, մինչ միեւնոյն շրջանին մէջ կան միայն 150 թրքական դպրոցներ մօտ 17,000 աշակերտներով :

Իրերու այս կացութեան, մտաւորական այս դործունէութեան եւ մանաւանդ հայերու աշխատանքի մէջ իրութեամբ ըլլալուն հետեւանքով է որ թրքական վարչութեան մէջ Հայ պաշտօնատարներու թիւը խիստ մեծ է : Այս պաշտօնատարներու թիւը եւ անոնց բաժին ինկող աշխատավարձի քանակը այնքան մեծ են որ, առանց անոնց՝ կառավարական մեքենան բացարձակապէս կանգ պիտի առնէր :

Մենք նման վկայութիւններ կը դռնէնք եւրոպացի եւ ամերիկացի գրեթէ բոլոր ճամբորդներու գիրքերուն մէջ, որոնք պատերազմէն՝ առաջ եղած են Թուրքիա եւ Հայաստան :

Գպրոցներու եւ աշակերտներու, ինչպէս նաեւ ուսուցիչներու համեմատութիւնը շատ աւելի աչքի զարնող է Հայաստանի ուսական մասին մէջ : Ռուսական, եւրոպական եւ ամերիկեան համալսարաններու մէջ սովորող Հայ ուսանողներու թիւը 15,000 կ'անցնի :

Հայերը նոյնպէս նշանաւոր հանդիսացած են Թուրքիոյ, Ռուսաստանի եւ Պարսկաստանի մէջ իրենց վարչական, զիւանագիտական եւ զինուորական յատկութիւններով : Անոնք տուած են ուսական բանակին բազմաթիւ զօրավարներ, Թուրքիոյ եւ Հունդարիոյ՝ վարչապետներ, եւ բազմաթիւ զիւանապետներ՝ Թուրքիոյ, Պարսկաստանի եւ ուրիշ երկիրներու :

Հայերը նշանաւոր հանդիսացած են, մասնաւորաբար վերջին յիսուն տարիներու ընթացքին, մտաւորական դործունէութեան բոլոր ճիւղերուն մէջ, գրականութիւն, գիտութիւն, արուեստ եւ այլն :

Այժմ ժամանակն է որ անոնք պատահութիւնը ունենան իրենց ընդունակութիւնները գործածելու՝ իրենց սեփական երկրին համար :

Հայ ժողովուրդը էպպէս ժողովրդապետական է : Ամէն ժամանակ ան վրած է իր հաստատութիւնները ընտրովի վարչութիւններով : Նոյն իսկ եկեղեցական նուիրապետութիւնը (hierarchie) բացառութիւն չի կազմեր, եւ Եկեղեցւոյ գերագոյն պետը կ'ընտրուի ամբողջ ազգին կողմէ :

Մեր հայրենիքը միշտ եղած է երկու աշխարհներու, արեւելեան եւ արեւմտեան քաղաքակրթութիւններու անջատման կէտը : Ճի՛շդ այս պատճառով է, որ Արեւելքի եւ Արեւմուտքի մեծ ընդհարումները տեղի ունեցած են մեր լեռներուն մէջ եւ կամ անոնց շուրջ, եւ ճի՛շդ այս պատճառով է որ Արեւելքի եւ Արեւմուտքի մեծ պետութիւնները ա՛յնքան մեծ կարեւորութիւն ընծայած են

այս շրջաններուն: Անոնք խլուած են յաճախ եւ կամ ձեռքէ ձեռք փոխանցուած՝ անթիւ պատերազմներէ ետք: Անոնք միշտ աւերուած են եւ ոտքի կոխան դարձած, բայց միշտ բնիկ հայ ժողովուրդն է որ զանոնք շինած եւ վերաշինած է, կերտած եւ վերստին կերտած է եւ երբէք թոյլ տուած չէ որ մեծ պետութիւն մը հոն հաստատուի մնայուն կերպով:

Հայաստանի ամբողջական պատմութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ անդուլ, յամառ եւ անհաւասար պայքար մը, պաշտպանելու համար իր անհատականութիւնը, իր մշակոյթը, իր կրօնքը հզօր ցեղերու եւ թշնամիներու դէմ, որոնք յարձակած են իր վրայ ամէն կողմէ: Ան տառապած է նաեւ դարերով՝ պահպանելու համար իր քրիստոնէական կրօնքը, խլամ արշաւողներու դէմ: Ան կանգնեցուցած է նաեւ ժամանակաւորապէս՝ Միջին Ասիոյ բոլոր հորդաներու արշաւանքները, որոնք հեղեղի պէս թափուած են դէպի Եւրոպա եւ վերջապէս կլանած են Բիւզանդական կայսրութիւնը:

Դարեր շարունակ, Հայաստան փոխն ի փոխ յաջողութիւններ ունեցած է մերթ կանգնելով եւ թագաւորութիւններ հիմնելով եւ մերթ ինչալով բռնապետներու լուծին տակ, մերթ վերականգնելով ու անկախութեան տիրանալով, երբեմն իր բնաշխարհի մէկ մասին մէջ, երբեմն միւս մասին մէջ, ըստ պարագաներու մղման: Այս անխոնջ մտաւորական աշխատանքին մեզ թողուցած ազնուական ժառանգներն են պատմական, փիլիսոփայական եւ բանաստեղծական մեծարժէք գրականութիւն մը 4-րդ դարէն սկսեալ, ճոխ ու ձկուն լեզու մը եւ ազգային նկարագրով օժտուած քրիստոնէական եկեղեցի մը:

Հայ ժողովուրդի դժբախտութիւնը կը կայանայ այն բանին մէջ, որ վերջին քառորդ դարու ընթացքին՝ թուրք բռնապետութեան տակ տառապող հայ ժողովուրդին մէջ Արեւմուտքի քաղաքակրթուած ժողովուրդները տեսած են միայն քրիստոնէայ հալածական ժողովուրդ մը, որ իրենց ներշնչած է կարեկցութեան եւ օչնութեան կարիք: Ոչ քէ կարեկցութիւն, այլ յարգանք պէտք էր տանել ժողովուրդի մը՝ որ աշխատանքի եւ ազատութեան համար սիրահար ըլլալով, ա՞յնքան տառապած է եւ այնքան առեւ ցոյցութիւն ունենալէ դադարած չէ: Դժբախտաբար հայկական պատմութիւնը շատ քիչ ծանօթ է Արեւմուտքին, ուր կ'անգիտանան այն դերը՝ զոր հայերը խաղացած են թէ իրենց սեփական պատմութեան եւ թէ այն ժողովուրդներու պատմութեան մէջ, որոնք իշխած են իր վրայ: Նոյնպէս նուազ ծանօթ են հայերու գրական եւ արւեստագիտական գործերը, որոնք կը ցոլացնեն մեր հոգիներուն լաւագոյն արտայայտութիւնները եւ ցոյց կուտան որ հայ ժողովուրդը կարելի է դասաւորել հպարտութեամբ՝ ուրիշ քաղաքակրթ ժողովուրդներու կողքին:

Այն ժողովուրդը, որ 30 դարերէ ի վեր, իր մասին պատմող Քսենոփոնէն ալ առաջ, ապրած է մինչեւ մեր օրերը այս բարձրաւանդակին վրայ՝ հայ ժողովուրդն է, ժողովուրդ մը՝ որ խաղացած է այն դերը, զոր պատմութիւնը եւ աշխարհագրութիւնը վերապահած են իրեն, որ այդ յիշատակարաններուն մէջ արձանագրած է այն ինչ որ ինք ըրած է եւ այսպէսով փաստած է իր իրաւունքը

այդ հողամասերուն վրայ, որ իւրաքանչիւր աւերուծէ վերջ՝ շինած ու վերաշինած է զանոնք, որ մտածած եւ արտադրած է: Միւս բոլոր տարրերը հանդիսացած են եւ են երկրորդական՝ իրենց քանակով եւ իրենց կարելորութեամբ, եւ կամ կը պատկանին կէս բարբարոս ցեղերու, որոնք ո՛չ արուեստ ունին, ո՛չ գրականութիւն, ո՛չ պատմութիւն եւ որոնք իրենց գոյութեան ընթացքին քաղաքակրթութեան համար ոչինչ ըրած են: Գալով թուրք աշխարհակալներու, որոնք սնած են մեր արիւնով, մեր ուղեղով եւ մեր քրտինքով, առանց իրենք սեւէ բան ստեղծելու, ուրիշ բան չեն եթէ ոչ շարունակութիւնը այն հօրդաներուն, որոնք ասորիներու ժամանակներէն սկսեալ արչուած եւ կործանած են մեր երկիրը, եւ որոնք անհետացած են պատմութեան ասպարէզէն հայկական բարձրաւանդակը թողլով իր բնիկ տիրոջ, հայ ժողովուրդին:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹԻՒՆԸ

Մեր հայրենիքին հիւսիսային շրջանները, որոնք ընդհանուր կերպով կը պարունակեն Արաքս գետի հովիտը, եւ որոնք 19-րդ դարուն, խլուած են ուս կառավարութեան կողմէ մաս առ մաս թէ պարսիկներէն եւ թէ թուրքերէն, նոյնպէս կը ներկայացնեն հայկական բարձրաւանդակի անբաժանելի եւ էական մէկ մասը: Արարատ, Գուգարք, Արցախ եւ Միւնիք հնուց ի վեր ծանօթ, կը կազմեն Հայաստանի չորս գլխաւոր դաւառները: Այստեղ է որ կը գտնուին մեր մայրաքաղաքները եւ մեր միւս երեւելի քաղաքներու մեծ մասը, ինչպէս Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդակերտ, Դուին, Նախիջեւան, Կարս եւ Անի:

Այստեղ է որ կը գտնուէր միջին դարուն մեր Բագրատունեաց թագաւորութիւնը, որուն մայրաքաղաք Անին, այսօր տակաւին կանդուն իր աւերակներով՝ լաւագոյն վկայութիւն մըն է որ ցոյց կուտայ այն աստիճանաշարը՝ որուն հասած էին հայկական ճարտարարուեստը, քաղաքակրթութիւնը եւ արուեստը: Լօրիի իշխանութիւնը տեւած է մինչեւ 15-րդ դարու սկիզբը: Ղարաբաղի մէջ, հայկական նախկին անկախութիւնը շարունակուած է մինչեւ ուսներուն վրայ հասնելը: Սամսայի մէլիքներն էին, որ գլխաւոր զրդիչը հանդիսացան ուսներուն Կովկաս մտնելուն, որոնք կը յուսային որ քրիստոնեայ ուսներու աջակցութեամբ, հայերը պիտի աղատագրուէին իսլամ լուծէն եւ կը վստահէին Յարերու խօսքին, որոնք կը խոստանային զբաւուած վայրերու մէջ հայկական անկախ կառավարութեան մը վերակազմութիւնը: Մինչեւ այսօր ալ տակաւին էջմիածնի մէջ կը գտնուի բոլոր հայերու հոգեւոր պետին, Կաթողիկոսին հայրապետական աթոռը, հիմնուած III դարուն, հայերու քրիստոնէութիւնը ընդունելու օրէն սկսեալ: Այս դաւառներու ամենակարեւոր տարրը, թէ քանակով եւ թէ իր գրաւած գիրքով, հայն է (տես այս յիշատակագրին կցուած թիւ 3 տախտակը):

Քանի որ պատերազմին եւ խաղաղութեան նպատակներէն մին է ճնշուած ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը, եւ քանի որ այս սկզբունքը ըն-

դռնուած է իրարու յաջորդող ուսական կառավարութիւններու կողմէ, եւ քանի որ Թուրքիոյ տապալուամով Հայաստանի մեծագոյն մասը ազատագրուած է, ուրեմն կարելի չէ որ այսուհետեւ Հայաստանին մէկ կարեւոր մասը Ռուսիոյ թողուի, պարզ այն պատճառով, որ այդ գաւառները կը գտնուէին ուսական տիրապետութեան տակ քանի մը տասնեակ տարիներէ ի վեր: Նաեւ, արդէն 1917-ի վերջերէն սկսեալ, ամբողջ Կովկասը դրականապէս եւ իրականապէս անջատուած է Ռուսաստանէն, կազմելով Կովկասեան Հանրապետութիւն մը: Այս Հանրապետութիւնը քիչ վերջ բաժնուած է երեք մասերու, ազգութիւններու իրաւունքի հիմունքներուն համաձայն: 1918 մայիսին, Հայկական Ազգ. Խորհուրդը Ռուսիոյ երկու միլիոն հայերու անունով հռչակեց Ռուսահայաստանի անկախ Հանրապետութիւնը, Նրեւանը ունենալով իրրեւ մայրաքաղաք: Կանոնաւոր կառավարութիւն մը կազմուեցաւ հոն, ինչպէս նաեւ բանակ մը, որ ջանաց ամէն միջոցներով կանգնեցնել թրքական բանակին դէպի Կարս յառաջխաղացքը, երբ ուսական բանակները փլուզուած եւ ցիրուցան, հայերը թողուցին միսմինակ՝ իրենց դարաւոր թշնամիներուն դէմ:

Հակառակ ամէն ազգարարութեան, ձգելով հայերը իրենց բազմին, կտակելով միայնակ անոնց պատերազմ մը, զոր վարել անոնց ուժերէն վեր էր, Պրէսթ-Լիթովսքի դաշնագրութեամբ Թուրքիոյ յանձնելով (առանց նոյնիսկ մեզ հետ խորհրդակցելու) կովկասեան հայկական նահանգները, Կարսը, Արտահանը եւ Կաղիսաման, եւ այսպէսով պատճառ ըլլալով հազարաւոր հայերու կործանումին, Ռուսաստան, այս իրողութիւններով իսկ, խզեց իր եւ Հայաստանի միջեւ դոյութիւն ունեցող ամէն կապ:

Միւս կողմէ միացեալ Լեհաստանի մը ստեղծումէն, ուսմանացիներու Պետարպիան գրաւելէն, Ֆինլանտայի կատարեալ անկախութենէն, Ուքրանեան պետութեան մը, ինչպէս նաեւ ուրիշներու կազմութենէն ետք, ուսական Կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու փաստարկութիւնը կարելի չէ վկայութեան կանչել:

Արդարութեան ժխտում պիտի նշանակէ, ուրեմն, Թուրքիոյ հայկական հողամասերէն զատել Ռուսիոյ հայկական հողամասերը, հոգ չէ թէ ինչ պատրուակի եւ ինչ ձեւի տակ ըլլայ ան, աւելի ճիշդ բացատրութեամբ՝ այդ պիտի նշանակէ ապրող մարմին մը անգամահատել, եւ այսպէսով ստեղծել նոր հալածանքներու, նոր ճնշումներու եւ նոր արիւնահեղութիւններու յաւիտենական պատճառ մը:

Կովկասի հայերուն մէկ մասը, թէ իրենք եւ թէ իրենց հայրերը, 1894-96-ի ջարդերէն առաջ Սուլթանի հպատակներ էին, այդ ժամանակ՝ անոնք ապաստանեցան ուսական հողամասերը: Միւս կողմէ, Կովկասի հայերը վերջին ջարդերէն տուժած ըլլալով այնքան որքան իրենց թրքահայ եղբայրները, պիտի կրնան Հայաստանին հայթայթել այն տարրերը՝ որոնց հայրենիքը պէտք պիտի ունենայ սկզբնական շրջանի մը մէջ, ստեղծելու համար երկիրը կառավարող վարչութիւն մը եւ յառաջ բերելու տնտեսական թոխչք: Զանոնք

անջատել Թուրքիոյ իրենց եղբայրներէն պիտի նշանակէր դատապարտել զանոնք խոտի նման սնանիլ ու մեռնելու, ինչպէս նաեւ աւելի ծանրացնել բեռը այն պետութեան, որ ժամանակաւորապէս Հայաստանին աջակցելու առաքելութիւնը պիտի ստանձնէ, զայն վերակազմելու համար: Ի՞նչպէս ուրեմն պետութիւնները կրնան հակառակիլ իրողութեան մը, որ հիմակուրնի կատարած է արդէն կատարեալ Թրքաւանականութեամբ այն սկզբունքներուն հետ, որոնց վրայ պիտի կենդիւ հաղաղութեան Դաւանագրութիւնը:

Ռուսիոյ հայերը, վերջին դարու կէսին, իրենց Ֆիզիքական եւ բարոյական ուժերու մեծ մասը նուիրած են Թրքահայաստանի դատին, որովհետեւ անոնք համոզուած էին որ իրենց փրկութեան ճամբան Թուրքիայէն կ'անցնէր: Ամբողջ սերունդներ ապրած են Թրքահայաստանը ազատագրելու երազով: Եւ ճիշդ այս պատճառով է, որ Ռուսիոյ հայերը, այս պատերազմը յայտարարուելէն ի վեր, մտած են խանդավառութիւնով ռուսական, Փրանսական եւ անգլիական զօրջներուն տակ, եւ միանալով Թուրքիոյ հայերուն հետ, կազմած են կամաւորական խումբեր, այսպէսով ապացուցանելով որ օտար կառավարութիւններու կողմէ գծուած արուեստական սահմանագիւղի մը անգօր էր բաժնելու անբաժանելի ամբողջը, կապուած իրարու հետ արիւնով, հոգիով, լեզուով, անցեալով, ներկայով, ապագայով եւ հասարակաց շահերով:

Արդարութեան անունով, մեր դարաւոր իրաւունքներուն անունով, Ռուսիոյ եւ Թուրքիոյ երկու հայ ժողովուրդներու անդիմադրելի բաղձանքներուն անունով, պատմական անողորելի անհրաժեշտութեան անունով, որ ուշ կամ կանուխ պիտի յաղթանակէ, մենք կը պահանջենք միեւնոյն ազգութեան այս երկու հատուածներուն վերջնական ու բացարձակ միացումը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԵՑ ՆԱՀԱՆՊՆԵՐՈՒ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ, 1912-ԻՆ

(Բացի չիֆֆնարիի եւ Աղբորի, Տիարաբէրի, Մարտիկայի հարաւային եւ Ալլալի արեւմտեան ու հիւսիս-արեւմտեան հարամասերէն)

ԻՍԱՄԱՆՆԵՐ	Երկրութ	Վան	Պիթլիս	Խարբերգ	Տարաբէր	Սվալ	Գուծար	Ըստ Կրօնի	
Բուրբեր	240.000	47.000	40.000	102.000	45.000	192.000	666.000	1.178.000	
Չէրէֆններ	7.000	»	10.000	»	»	45.000	62.000		
Պարսիկներ	13.000	»	»	»	»	»	13.000		
Լազեր	10.000	»	»	»	»	»	10.000		
Գնչուներ	»	3.000	»	»	»	»	3.000		
Նասաղեաց ֆիւրտեր	35.000	32.000	35.000	75.000	30.000	35.000	242.000		
Թափառական, ֆիւրտեր	40.000	40.000	42.000	20.000	25.000	45.000	182.000		
ԳՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐ									
Հայեր	215.000	185.000	180.000	168.000	105.000	165.000	1.018.000		1.183.000
Նեաստրականներ	»	»	»	»	»	»	»		
Յակոբեղներ	»	18.000	15.000	5.000	60.000	25.000	123.000		
Քաղղկացիներ	»	»	»	»	»	»	»		
Յոյներ	12.000	»	»	»	»	30.000	42.000		
ՉԱՆԱՋԱՆ ԿՐՈՆՆԵՐ									
Գղբուկաշներ	25.000	»	8.000	80.000	27.000	»	140.000	254.000	
Չաղաններ	30.000	»	47.000	»	»	»	77.000		
Չարբէլիներ	»	»	»	»	»	»	»		
Եկեղիւններ	3.000	25.000	5.000	»	4.000	»	37.000		
	630.000	350.000	382.000	450.000	296.000	507.000	Ընդ. գլխ.	2.615.000	

ԳԻՒՆ 2

Վ Ի Ճ Ա Վ Ա Պ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Ե Ց Ն Ա Տ Ա Ն Գ Ն Ե Ր Ո Ւ Ե Ր Կ Ի Լ Ի Կ Ո Յ Բ Ն Ա Վ Զ Ո Ւ Թ Ե Ա Ն, 1914 - Ի Ն

Դ Ն Ա Տ Ա Ն Գ Ն Ե Ր	Կ Ի Լ Ի Կ Ի Ա Ա		Գ Ր Ա Ն Ա Ր
	Բաժնի Տնօրենի համար Մասնաճանապարհի և Ենթաճանապարհի համարները	Մասնաճանապարհի և Ենթաճանապարհի համարները	
Իսպել	1,198,000	205,050	1,403,000
Յոհաննիսյաններ	242,000	40,000	282,000
Նուսրուրյաններ, Յակոբյաններ, Յան, Բաղդասարյաններ, Եղիազարյաններ	124,000	41,000	165,000
Թուրքեր	865,000	78,000	943,000
Քիչուրներ	4,244,000	58,000	4,302,000
Լազեր, Զեքուրյաններ, Արսալ Գաբրիել Գաբրիելյաններ, Ենթաճանապարհի Յեղևուրներ ևն	190,000	20,000	210,000
	255,000	48,000	303,000
	3,298,000	490,000	3,788,000

Թ Ո Ւ Ւ Թ Ի Ո Յ Ի Ն Ա Ն Բ Ն Ա Վ Զ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Մ Ո Ր Չ Ա Վ Ա Ն Թ Ի Ի Ն

1914 - Ի Ն

Թրքահայաստանի վեջ
Ասիական Թրքաթիլի միջառնակություն վեջ
Պոլիսի և Անտաղիական Թրքաթիլի վեջ

Գ Ր Ա Ն Ա Ր - - - - 2026,000 Իսպել

ԹԻՒՆ 3

Վ Ի Ճ Ա Վ Ա Պ Ո Ւ Թ Ի Ի Ն Ո Ւ Ո Ս Ա Կ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Ն Բ Ն Ա Վ Զ Ո Ւ Թ Ե Ա Ն, 1914 - Ի Ն

Կ Ի Լ Ի Կ Ի Ա Ա	Գ Ր Ա Ն Ա Ր		Թ Ի Ի Ն Ա Ր
	Արևմտյան վեջ	Քաղաքի և Ենթաճանապարհի վեջ	
Իսպել	669,000	376,000	98,000
Ուրուշյաններ, Կարապետյաններ ևն	16,000	9,000	28,000
Թուրքեր	8,000	3,000	50,000
Թրքաթիլներ	365,000	138,000	12,000
Քիչուրներ	34,000	"	41,000
Ենթաճանապարհներ	17,000	"	21,000
	1,109,000	526,000	230,000
			187,000
			2,079,000

Ի Ն Ա Ր Ա Ւ Կ Ո Վ Կ Ա Ս Ի Կ Ա Յ Բ Ն Ա Վ Զ Ո Ւ Թ Ի Ի Ն

Երևանի նահանգ
Գանձակի
Կարաթի
Թրքաթիլ
Պարսիկ
Սոխումի ջրբան
Անա ճակնամ գաղաթներ
Պարսիկ ջրբան
Տարսուսի գաղաթ
Քուրդաթիլի
Քարաթիլի

Գ Ր Ա Ն Ա Ր - - - - 1,804,662 Իսպել

ԱՄԲՈՂՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ 1914-ԻՆ
ST. NERSES SHNORHALI ԵՂՂԱՍԿԱՆ ՎԻՃԱՎԱԳՐՈՒԹԻՒՆ
 ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՈՒ ԻՍԼԱՄ
 ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԻՐԵՆՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ
 ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ՍՈՒՐԱ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ
 ԳՐԱԴԱՐԱՆ
 ST. NERSES SHNORHALI
 1914-LIBRARY

Թրքահայ, Կովկաս, Մասսուսի շախատանք	Գումար	Պուլկարիոյ բնակչութիւնը 1876-ին թրքական լուսնի աղաւաղութիւն առաջ
Հայեր	1,403,000	1,130,000
Չինի, Ռուսներ, Նաորայականներ ևն.	447,000	12,000
Քուրդներ	943,000	2,300
Քաթարներ	337,000	65,000
Քրիստոնե և թիւրքականներ	73,000	
Հասեր, Զեպէճներ, Կրպա ևն.	210,000	
Գլխաւորներ, Զարգանի, Ենթաբնի ևն.	303,000	
	3,788,000	1,209,300
	2,072,000	12,000

ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԹԻՒԸ, 1914-ԻՆ

Հայաստանի մէջ	Գումար	Գումար
Քուրդական տարածքի մէջ	1,403,000	1,437,000
Կովկաս, Հայաստանի մէջ	440,000	666,000
Հայաստանի Մսմիկից շրջաններ	508,000	424,000
Ատիակ, Քուրդիոյ միւս մասերուն մէջ	140,000	88,000
Կովկասի միւս մասերուն մէջ	183,000	
Պարսկաստանի մէջ	280,000	
Աւելի հեռու շրջաններ	420,000	
Պոլիս և Եւրոպական թուրքիա	430,000	
Ռուսաստան և հիւս. Կովկաս		4,178,000
Եւրոպա, Եգիպտոս և Հեթկաստան		1,437,000
Ամերիկա		37,000
Ընդի. Գումար	4,470,000	

Պուլկարիոյ բնակչութիւնը 1876-ին թրքական լուսնի աղաւաղութիւն առաջ

Պուլկարներ 1,130,000
 Յույներ 12,000
 Նեստորականներ 2,300
 Վարդաններ և ուրիշներ 65,000
 Գումար Գրիստոնեաներու 1,209,300
 Յիւսիաններ (գէշու) 12,000
 Հրէաներ 12,000
 Ընդի. Գումար 4,233,500
 Գումար 774,000
 Ներդրած Քաթարներ 110,000
 Գնչուներ, Իսլամներ 35,000
 Չէրքէզներ 200,000
 Գումար 4,119,000
 Իսլամ բնակչութեան Ընդի. Գումար 2,332,300
 Ընդի. Գումար 2,613,000

Բ. Տ Պ Ա Գ Բ Ո Ի Թ Ի Ի Ն

HAIRENİK PRESS
7 Bennet Street, Boston, Mass.
1 9 1 9